



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

Կ Ա Ր Մ Ո Ւ Ճ  
Զ Ո Ւ Տ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ Ի Ի Ղ Ա Ք Ա Ղ Ա Ք Ը



ՃԱՆՕ (ՅԱԿՈՒԲ) ՂԱԶԱՐԵԱՆԻ  
ԿԱՐՄՈՒՃ ԱՑՑԵԼՈՒԹԵՆԷՆ \_ 1967 ԻՆ

\*\*\*\*\*  
\*\*\*\*\*

### ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄՈՒՃԸ

Ուրֆայէն մօտաւորապէս մէկ ու կէս ժամ հետու, հիւսիս արեւելեան կողմը կը գտնուի զուտ հայաբնակ Կարմուճ գիւղը:

Անոր հիմնարկութիւնը կը վերագրուի Արշամի որդի՝ Արզար Ե. րդ. ին: Աւանդութիւնը կ'ըսէ, որ երբ Արզար Թագաւոր, Թաղէոս Առաքեալի խորհուրդով Ուրֆայի Ս. Աստուածածին եկեղեցին շինել տուաւ, գիշեր մը այդ եկեղեցիին հիւսիսային կողմէն, հորիզոնին վրայ կամարածեւ լոյս մը տեսաւ: Արզար Թագաւոր երկնային նշան մը նկատելով այդ լոյսը, հրամայեց այնտեղ Կամուրջ անունով քաղաք մը շինել:

Այդ թուականէն դարեր վերջ, երբ Պարսիկները Ուրֆան գրաւեցին, Կամուրջն ալ անոնց կողմէն քանդուեցաւ:

Այժմ այդ քաղաքին աւերակներուն վրայ կը գտնուի Կարմուճ զուտ Հայկական գիւղը, որուն հին քաղաք մը ըլլալուն ապացոյցը այն է, որ երբեմն պեղումներու ընթացքին գետնին տակէն արժէքաւոր հնութիւններ երեւան կ'ելլեն:

1 .- Ջրոյցներ կան, որ Կարմուճի հիմնադիրները եղած են կարին քաղաքէն եկողներ, յետոյ մաս մը եկած են Մուշ քաղաքէն, ժամանակի ընթացքին երկու քաղաքներու առաջին վանկերէն կազմուած է կար - Մուշ ԿԱՐՄՈՒՃ գիւղին անունը, բայց այս խօսքերը, ոչ մէկ գրքի կամ յօդուածի մէջ գրուած կամ հաստատուած են:

Կարմուճ անունով գիւղ մըն ալ կը գտնուի Հայաստանի Սոխորդ գիւղի սահմանամերձ Նեւրուտ սարին տակ, լեզուն եւ հնչաբանութիւնը թէեւ շատ մօտ է այս երկու գիւղերուն բայց կրկին ոչ մէկ գրքի կամ յօդուածի մէջ գրուած կամ հաստատուած է:

Կ'ըսուի թէ Կարմուճ քաղաքը ժամանակին եօթը ջուրի աղեր ունեցած է, որոնցմէ երկուքը ի սպառ կորսուած են, միայն անոնց ջրուղիներուն հեռքերը կը տեսնուին, իսկ

երկու ակեր ալ խառնուած են այն երեք ակերուն, որոնց ջուրերը կ'անցնին գիւղին մէջէն ու կ'երթան ջրելու պարտէզներն ու բանջարանոցները:

Գիւղին մէջի երեք ջուրի ակերէն, մէկը կը կոչուի Ս. Դժխոյի ակ, երկրորդը Ս. Թաղէոսի իսկ երրորդը Ս. Գէորգի ակ:

Կարմուճի մշակները առհասարակ երիտասարդներ եւ սրատանիներ էին, որոնց հերկած արտերուն ակօսները բոլորովին տարբեր ձեւ կ'ունենային ու կը զարմացնէին չըրջանի այլազգի երկրագործները:

Կարմուճ գիւղաքաղաքը 1850էն 1895 թուականներուն ժօտաւորապէս չորս հարիւր ընտանիք կը հաշուէր իր մէջ, անկից վերջ, մինչեւ 1915, այդ թիւը հասաւ հազար ընտանիքի եւ զուտ հայաբնակ:

Գիւղին իննսուն տոկոսը Հայ Առաքելական Եկեղեցւոյ զաւակներ էին: Վերջին ժամանակները, Պատուելի Պետրոս Մատառեանը, Մկրտչական Բողոքականներուն համար ժողովարան մը և Մկրտութեան մեծ աւագան մը շինել տուաւ, կողքին ալ դպրոց մը:

Կարմուճի եկեղեցին շինուած էր հին դարերուն, սակայն քանիցս քանդուած էր բարբարոսներու կողմէ: Վերջին շրջանին գոյութիւն ունեցող փառաւոր եկեղեցին, 1881ին շինուած էր ճարտարապետ Յակոբ Արծիւեանի եւ գիւղացիներու ջանքերով: Եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնայ անունին:

Կարմուճի դպրոցը 1895էն առաջ 150 աշակերտ կը հաշուէր, մինչեւ 1915 կրկնապատկուեցաւ այս թիւը:

Գիւղին բնակիչները կրօնասէր էին, իրարու հետ սիրով կ'ապրէին, մեծերուն խօսքը կշիռ ունէր երիտասարդներուն մօտ: Կարմուճցիին նաեւ քաղաքագէտ էր, չըջակայ աշիրէթներուն հետ ապրելու ձեւերը գիտէր, յաճախ ինքզինքը տնուշ լեզու ցոյց կու տար, բայց պէտք եղած պարագային բռունցքն ալ ցոյց տալու պատրաստ էր:

Կարմուճի մէջ բնաւ թուրք գտնուած չըլլալուն, իրենց զաւառարարաւոր մնացած էր զուտ հայերէն, խօսելու առանձին ոճ մը ունէին, պատկերաւոր եւ սրամտութիւններով լեցուն: Կը սիրէին հայերէն գիրք կարդալ, կարդալ գիտցողն ալ չգիտցողն ալ անպայման Աստուածաշունչ Մատեան մը կ'ունենար իր տան մէջ:

Գիւղը ունէր իր Սրբավայրերը, որոնք ժողովուրդին մէջ աւելի կը հրահրէին Կրօնական ջերմեռանդութիւնը:

Արեւմուտքէն դէպի Արեւելք երկարող Սեւ քար կոչուած լեռնաշղթային մէջ Ս. Յովհաննէս, Ս. Թաղէոս, եւ Ս. Յակոբ Հայրապետներուն նուիրուած եւ աւերակ դարձած ժայռափոռ վանքեր ու ճգնարաններ կային:

Իւրաքանչիւր լեռնագագաթ կը ճանչցուէր իր ճգնաւոր սուրբին անունովը: Այդ լեռներուն մէջ, սրբոց արտասուքն ու հառանջանքը, մաղթանքներն ու հեծեճանքները լսող ու տեսնող այդ քարայրները եւ հսկայ ժայռերը դեռ կը նըշմարուին՝ իրրեւ անլեզու վկաներ անցեալին, ու մեզ կը մղեն յարգանքի եւ աւելի ջերմեռանդութեան:

Գիւղին հարաւ արեւմտեան լեռան գագաթին վրայ կը տեսնուէր նաեւ Ս. Մարտիրոս անուն վանքի մը մնացորդները, այս վանքը իր բարձրահայեաց դիրքովը կարծես կը հսկէր գիւղին ընդարձակ դաշտագետիններուն եւ պարտէզներուն վրայ:

Կար նաեւ Ս. Մինաս անուան նուիրուած վանքի մը հետքերը, որ մօտ էր գիւղի կալերուն: Իսկ պարտէզներու ծայրին մէջ կը գտնուէր Ս. Յակոբի անուան վանքի մը կալաւածները: Այս վանքապատկան հողերը բաժնուած էին գիւղացիներուն միջեւ, միայն երկու թութի ծառ՝ համանուն վանքին անունով, կը նկատուէր համրային սեփականութիւն: Նոյնպէս կը յիշուէր Ս. Եղիա անունով վանքի մը անունը, որ ժամանակին գոյութիւն ունեցած էր գիւղի գերեզմանոցին մօտ:

Կարմուճի հիւսիսային կողմէ երկարող լեռնաշղթային կեդրոնէն, դէպի գիւղ իջնող խորխորատ մը կար, որուն խորութիւնը անկարելի եղած էր չափել: Ըստ ոմանց, այդ բացուածքը մարած հրաբուխի մը բերանը եղած պէտք է ըլլայ, այս պարագան կը հաստատուի նոյն շրջանին մէջ գոյութիւն ունեցող ծծումբի սառած շերտերով: Ըսողներ կան, որ այս բացուածքին մէջէն, հոսող ջուրերու ձայներ կը լսուին, եւ թէ Կարմուճի ակերը այնտեղէն է, որ ծընունդ կ'առնեն:

Այս լեռնաշղթային շարունակութեան վրայ, տեղ տեղ բուսականութիւն եւ ծառեր կը նշմարուին, իսկ լեռներէն անդին, ուրիշ բարձրութիւններ կը ցցուին, որոնք մոխրագոյն հրաբխային քարերու տեսքը ունին:

Կարմուճի և Ուրֆայի մէջտեղ, Սեւ Լեռ կոչուող բլր



լուրին քարակոյտերուն մէջ կը նշմարուի կնոջ կերպարանք ունեցող քար մը: Կը պատմուի թէ, ժամանակին երբ նոր հարս մը քաղաքէն գիւղ կը բերէին, ճամբու ընթացքին չարագործներու յարձակման կ'ենթարկուի: Հարսը այդ վայրկեանին Աստուծոմէն կը խնդրէ զինքը քարացնել, չարագործներուն ձեռքը չանցնելու համար, Աստուծոմով խնդրանքը կը կատարուի: Մինչեւ վերջերը, քաղաքացին կամ գիւղացին, այդ հարսնաքարին քովէն երկիւղածութեամբ կ'անցնէին եւ աղօթք մը կը մրմնչէին:

Կ'արժէ յիշել նաեւ, որ Կարմուճի մէջ գոյութիւն ունէր, մագաղաթեայ հին ձեռագիր պիւրք մը, որուն մէջ թանկագին տեղեկութիւններ ամփոփուած էին, այս պիւրքը բազմաթիւ այլ մասունքներու հետ, անհետ կորսուեցաւ 1915ի տարագրութեան շրջանին:

Մինչեւ 1895, Կարմուճի մէջ կը գտնուէր չորս քահանայ հայրեր, Տէր Գրիգոր՝ Աւագերէց, Տէր Ղուկաս, Տէր Ներսէս եւ Տէր Կարապետ:

Գիւղին հիւսիսէն դէպի արեւելք Ս. Վանէսի լեռը կ'երկարի՝ մինչեւ Կէօք Թեփէ Արարական գիւղը: Լեռան շրջափակին վրայ՝ կէս ժամ լայնքով, մէկ ժամ ալ երկայնքով մինչեւ Ս. Համբարձում, Կարմուճի այգիները կ'երկարին:

Կարմուճի արեւմուտքն՝ դէպի հիւսիս սեւ եւ սպիտակ լեռներէն մինչեւ Ամամու լեռը՝ մէկ ժամ տարածութեան վրայ դարձեալ Կարմուճի այգիներն են: Երբ գիւղին հիւսիսային լեռները անցնիս, ԽԵՅՐԱԹ ըստուած տեղը ջրհոր մը կայ, այդ շրջանին մէջ եւս ընդարձակ այգիներ ունէի՞մ Կարմուճցիները մինչեւ ՄԸՃԻՏ, վերջապէս Կարմուճի այգիները կը տարածուէին մինչեւ ԳԱՐԱԽԱՐՈՒՊԱ գիւղէն երկու ժամ անդին, մօտաւորապէս 30 տեսակ խաղող կը գտնուէր Կարմուճի շրջանին մէջ եւ ան ալ շատ առատ, որմէ կը շինէին չամիչ, բուպ, պաստեղ, գինի, քացախ եւ այլն:

Ինչպէս յիշեցինք, գիւղին ջուրերը՝ սրոնք լեռներուն տակէն կու գային, 20 կանգուն խորութեամբ փորուած ջրանցքէ մը կ'անցնէին, անկից ՍԸՔ ՍԸՐԸՊԻՆ ջուրերը գուրս կու գային լոյս աշխարհ: Ջուրին հոսանքը այնքան զօրաւոր էր, որ կը դարձնէր Տանուէր Մղձ. Ներսէս Մղձ. Ներսէսեանին ջաղաղքը:

Կարմուճի ջուրերը բաւական էին պարտէզները ջրելու համար, գիւղը հարիւրէ աւելի պարտէզ ունէր, բոլորն ալ

տեսակաւոր պտղատու ծառերով լեցուն: Պարտէզներուն մէջ կը գտնուէին խնձոր, տանձ, սալոր, պիստակ, ընկոյզ, ծիրան եւ նուր: Կարմուճի նուազ իր նմանը չունի ուրիշ տեղ մը, չափազանց համով կ'ըլլար, իսկ մեծութիւնը սեխի մը չափ, մէկ նուռէն խոշոր թաս (զաւաթ պղինձէ) ջուր կարելի է քամել եւ ամառուայ տաքուն ծառաւղ յագեցնել:

Վերոյիշեալ պարտէզներու կողքին արտերուն մէջ կը հասնէին ամէն տեսակ կանանչեղէններ, սոխ, սխտոր, սմբուկ, լոլիկ, կանաչ եւ կարմիր պիպեռ, եւայլն, Ուրֆայի մէջ յարգի էր Կարմուճի պտուղներն ու կանանչեղէնները, մաքուր ջուր, մաքուր օդ, հաւատացեալ պարտիզպաններ, իրենց հասցուցածներն ալ կ'ըլլային համով հոտով յարգելի եւ փնտուած պտուղներ եւ կանանչեղէններ:

Գիւղը ունէր ութսուն զոյգ արօր, բազմաթիւ կճղակաւոր անասուններ: Ամէնէն շատ արօրի եւ կենդանիներու տէր էին Մղձ. Ներսէսեց Ներսէսը, Մղձ. Մարգարենց Արուշը, Տէրաւրանց Եղբայրները, Գուլումճոնց Մղձ. Կարապետը, Պարտիզեան Եղբայրները, Պարսումեանեք եւայլն:

Կարմուճի տուններուն մէջ նաեւ ջուլհակութիւն ընողներ կային, պարտէզի գործերէն երբ տուն դառնային եւ կամ պարտէզները երբ գործ չէր ըլլար, ջուլհակութիւն կ'ընէին, աշխատասէր մարդիկ էին:

Կարմուճցիներէն մաս մըն ալ կը զբաղէին ջորեպանութեամբ: Այս արհեստին մէջ Կարմուճցիները այնքան ճարպիկ և հաւատարիմ էին, որ վաճառականները իրենց կը վստահէին մեծաքանակ ապրանք և նոյնիսկ իրենց դրամները, քաղաքէ քաղաք՝ մինչեւ Տիգրանակերտ եւ կամ Հալէպ փոխադրելու:

Կարմուճ ունէր մօտ 500 բեռ կրող չորքոտանի: Մեծ պահքին կը սկսէին շարչիութեան, անասուններու վրայ կը բեռցնէին՝ պլղուր, ծեծած ցորէն, չամիչ, եւայլն ու կ'երթային քոչերը՝ քիւրտերուն մօտ: Ապրանքները կը փոխադրուէին, իւղով կամ պանիրով: Ս. Յարութեան Տօնէն 15 օր առաջ, քաղաքէն կ'առնուէր, հագուստի վերաբերեալ կտորեղէն եւ կը տարուէր ԱՐԱԲ ՀԷՆԷՁԷ աշիրէթին մէջ, ապրանքները կը փոխանակուէին բուրդի եւ իւղի հետ եւ մեծ շահեր կ'ապահովուէին:

Կարմուճցի մասնաւոր կերպով յարգ ու պատիւ ունէր Վերան ԵՃՏԻՐԻ մէջ: Իպրահիմ Փաշան կը սիրէր Կարմուճ-

ցիներն ու թոյլ չէր տար, որ իր շրջանին մէջ անոնք որեւէ անիրաւութեան ենթարկուին: Այս բարեկամութեան հիմը դրած էր Մղձ. Կարապետ Մղձ. Ներսէսեանը, որ ԻՊՐԱ-ՀԻՄ ՓԱՇԱՅԻ Տօրը՝ ՄԷՀՄՈՒՏ ԹԸՄՈՅԻՆ, կնքահայր (Քիրովէ) եղած էր: Այդ օրէն ասդին, Միլի Աշիրէթը բարեկամ դարձած էր Կարմուճցիներուն հետ:

Կարմուճ գիւղի չորս սահմաններուն վրայ՝ մինչեւ մէկ ժամ ոչ թուրք կը գտնուէր եւ ոչ այլ ազգի աշիրէթներ: Գիւղին մէջ ալ նմոյշի համար թուրք կամ քիւրտ չէր գտնուէր, բոլորն ալ Հայ Առաքելական եկեղեցոյ զաւակ՝ մէկ Աւագանի մէջ Մկրտուած, հաւատացեալ Հայեր էին, կային քանի մը տուն Բողոքական, անոնք ալ լաւ Հայեր էին:

Կարմուճի քաջերը անուն ունէին շրջակայ քիւրտ եւ արաբ աշիրէթներուն մէջ, Փաչենց Դաւիթը, Միրոյենց Մարտոն, Ժամկոչենց Մանուկը, Թօփալ Նէզօն, եւ ուրիշներ, անուանի քաջեր էին: Այդ օրերու գիւղապետը՝ Մղձ. Ներսէսեանց Ներսէսը մեծ ազդեցութիւն ունէր գիւղին մէջ, ամէն մարդ կը հնազանդէր եւ մտիկ կ'ընէր անոր ըսածին, խորհուրդներուն եւ հրահանգներուն:

Այս քաջերուն մասին առանձին - առանձին պիտի խօսինք յաջորդ էջերուն մէջ:

Գիւղին մեծաւորները՝ Մղձ. Հայրապետենց Արուշը, Երանոսենք, Գազանձեանենք, Շուշանենք, Հերպոյենք, Քէչըլօնք, Նէզէրէնք, Գույումճոնք, Մղձ. Գրիգորենք, Ծիմառոնենք ծանր մարդիկ էին ու չէին ձգեր, որ գիւղին մէջ ուրիշ մէկը նեղութիւն ունենայ կամ իրարու հետ խընդիր ունենայ:

Կարմուճի Կիրակին, Տօն օրերը, իսկական Հայ Քրիստոնեային արժանի սուրբ օրեր էին: Բոլորն ալ այդ թէ կին, մեծ թէ փոքր լեցուած կ'ըլլային եկեղեցին:

Կարմուճի եկեղեցին շինուած էր սպիտակ կարծր քարէ, ունէր բարձր գմբէթ եւ զանգակատուն, խորանը մարմար էր, հինգ սիւներու վրայ հրեշտակներ, աղանիներ կային:

1895ը համատարած կոտորածի թուական է հայութեան համար: Մօտաւորապէս բոլոր հայկական քաղաքներուն մէջ 300 հազար հայ կոտորուած են, այս սպանդէն հնարքով մը ազատած է Կարմուճ գուտ հայկական գիւղը:

Երբ Մահմետականները կը յարձակէին Ուրֆայի Հայոց

վրայ, Քիւրտ եւ Արաբ զինեալ ճիւղեր խումբեր կ'իջնէն Կարմուճի վրայ: Հայերը իրենց ունեցած քանի մը վրանները կը լարեն գիւղին զիմաց եւ որքան որ կրնան մեծ ցոյց կու տան իրենց զինեալ ուժը, նոյն ատեն ազդարարութիւն մը կը զրկեն իրենց վրայ յարձակողներուն, թէ վրանները գրաւուած են թուրք զինուորներով, զորս կառավարութիւնը զրկած է գիւղի պաշտպանութեան համար:

Արաբները ու Քիւրտերը, կը խարուին, ու կը քաշուին այն տալաւորութեան ներքեւ, թէ իսկապէս կառավարութիւնը անբացատրելի պատճառով մը, իրապէս իր պաշտպանութեան տակ առած է, Կարմուճ գիւղը:

1895ի դէպքերու ընթացքին, ինչպէս յայտնի է Կարմուճը բախտաւոր եղաւ եւ ազատուեցաւ փորձանքէն: Ուրֆայի մօտ գտնուող այս գուտ հայկական գիւղը, շնորհիւ իր ցուցաբերած քաջութեան եւ քաղաքագիտութեան, դէպքէն վերջ ալ շարունակեց պահել իր կիսանկախ վիճակը:

Ինչպէս Ուրֆա, նոյնպէս եւ Կարմուճը շրջապատուած էին այնպիսի գաղանաբարոյ տարրերով, որ հազիւ կը յաջողէին պահել իրենց գոյութիւնը եւ հնարաւորութիւն չէին ունենար ազգային կեանքը դնելու կանոնաւոր վիճակի մէջ:

Այսու հանդերձ, ժողովուրդը ճիգ կ'ընէր եւ անկարելին ի գործ կը դնէր գէթ կրթական մարդին վրայ յառաջդիմելու: Այս ուղղութեամբ Կարմուճը բաղտաւոր էր՝ իր մէջ ունենալու համար կարգ մը դպրոցասէր անձնաւորութիւններ, եւ Մղձ. Ներսէս Ներսէսեանի նման ազգու գիւղապետ մը: Այս վերջինը զաւակն էր Մղձ. Կարապետ Մղձ. Ներսէսեան գիւղապետին, որ 1880էն առաջ մեծ համբաւի տիրացած էր Կարմուճի և իր շրջաններուն մէջ: Գճի դէպքերու ընթացքին, Մղձ. Ներսէս մեծ քաջութիւն ի յայտ բերած է եւ գիւղին քաջերը գլխաւորելով, յաջողած է ժողովուրդը ազատել կոտորածէն:

Դէպքէն վերջ, այս արժանաւոր գիւղապետը լծուեցաւ, եկեղեցին բարեզարդելու և դպրոցներ բանալու աշխատանքին: Իրեն գլխաւոր աջակիցներէն էին, Յակոբ Նազարէթեան, Յակոբ Շուշանեան, այս վերջինը 1901ին, մեռնելէ առաջ իր ամբողջ ստացուածքը կտակած է եկեղեցիին եւ դպրոցին: Կարմուճի այդ շրջանի թաղականութեան մաս կազմած են, Արուշ Մղձ. Հայրապետեան, Յակոբ Քէչէլեան, Գույումճեան, Նազարեան, Կրպոյեան եւ Շուշանեան ընտանիքները:

Ուրֆայի Հերոսամարտը սկսաւ Սեպտեմբեր 29ին, բայց չարաթիւնքն ատաղ արդէն սկսած էր դէպքեր պատահել, արտակարգ խառութեամբ ատաղ կը տարուէր նաեւ զօրահաւաքը:

1500է աւելի երիտասարդներ արդէն զրկուած էին քաղաքին մօտակայ Գարա - Քէօիբի եւ Գուտամէ կոչուած վայրերուն մէջ աշխատելու:

Ոստիկաններ խուճերով կը շրջէին Հայ թաղերը, փախըտական զինուորներ բռնելու պատրուակով տունները խուզարկէին: Կառավարութեան ամբողջ ճիգը կեդրոնացած էր Մկրտիչ Եօթնէղբերեանը և իր ընկերները ձերբակալելու վրայ սակայն ան չափազանց զգոյշ էր ու ամէն օր կը փոխէր իր տղոց պահուած թագստոցները:

Հայոց թաղի խուզարկութիւններուն վերջ տալու յոյսով, օրուայ Առաջնորդը՝ Հոգւ. Տ. Արտաւազդ Մ. Վրդ. Գալէնտէրեան կը թելադրէ Մկրտիչին ժամանակի մը համար հեռանալ քաղաքէն: Մկրտիչ ընդատառջելով Առաջնորդի այս առաջարկին, երեսուն ընկերներով կը մեկնի քաղաքէն մէկ ժամ հեռու դոնուոզ Կարմուճ գիւղը, եւ կ'որոշէ Կարմուճի կողքին գտնուող Ս. Վանէսի լեռան մէջ ըսպասել ժամանակ մը՝ մինչեւ կապութեան բարեօքումը եւ կամ տեղահանութեան հրամանին արձակուելը:

Սակայն, հոն հասնելէն քանի մը օր վերջ, կառավարութիւնը իմացած ըլլալով Մկրտիչի տեղը, պաշարման տակ կ'առնէ Կարմուճ գիւղն ու Ս. Վանէսի լեռը:

Յուլիս 6ի երեկոյեան կռիւր կը սկսի պաշարող զօրքի եւ Հայ տղոց միջեւ: Մկրտիչ, նկատելով, որ փոքր եւ անջրգի լեռը կռուի յարմարութիւններ չ'ունի, կարգադրութիւններ կ'ընէ ճեղքելու պաշարման շղթան ու իջնելու Ուրֆա:

Երեք ժամ տեւող կռիւէ մը վերջ, արթուն եւ հեռատես խաղով մը Մկրտիչ Եօթնէղբերեան և Յարութիւն Ռասթկէլէնեան կը յաջողին խուճերը դուրս բերել պաշարումէն ու մտցնել քաղաք՝ հայկական թաղերը, կազմակերպելու և քանի մը օր վերջ կերտելու համար Ուրֆայի փառայեղ հերոսամարտը:

Թուրք հրամանատարը զայրացած այս անյաջողութեանէն, իր զայրոյթը կը թափէ գիւղացիներուն գլխուն, զօրքերը շարչարելով կը սպաննեն Կարմուճի իշխան՝ Գէորդ Մղձ. Ներսէսեանը, ու մարմինը կը տանին քաղաք ցուցադրութեան:

Այս գիւղապետը յարգուած ու վարչապէտ անձնաւորութիւն մըն էր ու սիրուած թէ քաղաքացիներէն եւ թէ գիւղացիներէն հաւասարապէս:



ԳԵՈՐԳ ՄՂՁ ՆԵՐՍԵՍԵԱՆ  
ԿԱՐՄՈՒՃԻ ԳԻՒՂԱՊԵՏ

Իշխան Գէորդ Մղձ. Ներսէսեան որդի Ներսէսի եւ Անթառամի ծնեալ 1875ին Կարմուճ, նախակրթութիւնը ըստացած էր Կարմուճի դպրոցին մէջ եւ ապա շարունակած էր Ուրֆայի մէջ, երկու տարի ուսուցչութիւն ըրած է Կարմուճի մէջ մինչև Զօրը տեղ գիւղապետ ընտրուելը:

Գիւղապետ Գէորդը յաճախ Մկրտիչին հետ կը տեսնուէր Կարմուճի եւ Ուրֆայի մէջ, խորհրդակցութիւններ կ'ունենային, թէ հերոսամարտը Կարմուճէն սկսին թէ Ուրֆայէն:

Ուրֆայի հերոսամարտէն վերջ, երբ ողջ մնացողները դէպի անապատ տարադրուեցան, կարգը եկաւ Կարմուճին:

Կառավարութեան կողմէ ձուժառ էֆէնտի կոչուած պաշտօնեայ մը, ընկերակցութեամբ քառասուն ժանտարմաներու կու գայ Կարմուճ եւ կը հրամայէ, որ պատրաստութիւն տեսնեն եւ երեք օրէն գիւղէն հեռանան:

Այս մարդը կը կարծուի, որ թուրք ըլլալու չէ, որովհետեւ մեղմութեամբ կը վարուէր ժողովուրդին հետ եւ թոյլ կու տար, որ գրաստներ ունենան, ապրանքներու փոխադրութեան եւ կամ հեծնելու համար:

1915ի, Դեկտեմբեր ամսուայ վերջերն է, պաղերն ու անձրեւները սկսած են:

Դիւրին չէր ժողովուրդին բաժնուիլ տունէ եւ տեղէ, պարտէզներէ եւ այգիներէ: Ամէն կողմ լաց ու կոծ, Կար-

մուծցին իր արիւն քրտինքին արդիւնքն եղող պապենակրան՝ օճախն էր, որ կը լքէր: Նաեւ չունէին այն միամտութիւնը, թէ ժամանակ մը վերջ պիտի վերադառնան իրենց տուները: Այս համոզումը ունենալէ վերջ, ամէն մէկը դէպի մահ երթալու պատրաստութիւնն էր, որ կը տեսնէր:

Առաջին կարաւանը 3000 հոգիէն աւելի կը հաշուէր, մեծ մասամբ կիներ եւ փոքրիկներ: Երիտասարդութիւնը գինւոր տարուած էր կանուխէն, ասոնցմէ քիչեր միայն բաղդ ունեցան ազատուելու հետագային ու ետ դառնալու գիւղ:

Ճումասա էֆէնտին ըսած էր, որ Ռազգա պիտի երթան, սակայն ո՞վ էր հաւատացողը, չէ՞ որ եկող գացող բոլոր կարաւաններն ալ զոհը դարձած էին նոյն խաբերայութեան:

Առաջին օրուան ճամբորդութենէն յետոյ յայտնի կ'ըլլայ, որ դէպի Ռազգա կ'ուղեւորուի կարաւանը, բարեբախտաբար ժանտարմաներու պաշտպանութիւնը կատարեալ կ'ըլլայ եւ ճամբան աւազակները չեն կրնար մօտենալ կարաւանին եւ ֆրաս հասցնել:

Կարմուճէն ելլելէն չորս օր վերջ կարաւանը կը հասնի Ռազգա, մինչդեռ ուրիշ կարաւաններ նոյն ճամբան շարաթներ տեւած էր Ռազգա հասնելու համար եւ այն ալ բաւական կոտորակուելէ վերջ:

Կարմուճցին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը կը տօնէ Ռազգայի մէջ Եփրատի եզերքին, անձրեւներու տեղատարափին տակ, եւ սաստիկ պաղ օդին:

Ճումասա էֆէնտի Ուրֆա վերադառնալէ առաջ, կը հաւաքէ մի քանի Կարմուճցի ծերեր ու անոնց կը թելադրէ, որ ամէն միջոց գործածեն Մուսուլի չրջանը երթալու համար, ան պարզ կերպով եւ սրտցաւօրէն կը յայտնէ, որ Տէր Զօր գացողները փճանալու դատապարտուած են:

Կը դիմեն Գայմագամին, սակայն ի զուր, ան կ'ըսէ, որ իր ձեռքէն բան մը չի գար, հրամանը վերէն է եւ ինքը ստիպուած է վերէն եկած հրամանը գործադրելու:

Կ'որոշեն կաշառել, 600 Օսմանեան ոսկի կը հաւաքեն, սակայն Արար Գայմագամը կը մերժէ առաջարկուած գումարը, խղճամիտ անձ մը ըլլալուն պատճառով չուտով պաշտօնանկ կ'ըլլայ:

Յունուարի վերջաւորութեան, անձրեւոտ օր մը, յանկարծ ոստիկանները կը պաշարեն կարաւանը, ու կը յայտ-

նեն, որ մէկ ժամէն պիտի շարժին դէպի Տէր Զօր: Տասը օրէն կը հասնին Տէր Զօր, մաս մը նաւակներով Եփրատի վրայէն, եւ մաս մըն ալ քալելով Եփրատի եզերքէն, երբ երկու խումբն ալ կը հասնին Տէր Զօր, կը սկսի ամէն կողմէն լացի ու կոծի աղաղակները, մէկուն եղբայրը չկար, միւսին զաւակը կամ ծնողքը, կամ հարազատը:

Քանի մը հոգի կրկին իրարու քով կու գան ու կը մտածեն կաշառել կառավարիչը, այն ինչ որ Ռազգայի մէջ չէր յաջողած, կրնար գլուխ ելլել Տէր Զօրի մէջ: Կրկին կը հաւաքուի 600 օսմանեան ոսկի եւ այս անգամ կը յաջողին կաշառել տեղւոյն կառավարիչը և կարաւանը շարժել դէպի Մուսուլ:

Տէր Զօրէն 120 քլմ. հեռւորութեան վրայ Եփրատի եզերքին գտնուող Ապու Քէմալի մէջ կարաւանը կրկին կը բաժնեն երկու մասի, մէկ մասը Տէրէք Հալայի եւ միւս մասը դէպի Մուսուլ, Մուսուլի ճամբան բռնողները անշուշտ յոգնութեամբ եւ դժուարութեամբ տեղ կը հասնին, գոնէ առանց զոհ տալու, Տէրէք Հալայի գացողները ժամանակ մը վերջ կրկին ետ՝ Տէր Զօր կը դառնան եւ հոն կը փճանան:

Մուսուլ հասնողները Անգլիացիներու մուտքէն յետոյ ազատ շունչ մը կը քաշեն, շատերը ետ Կարմուճ կը դառնան եւ մաս մը մինչեւ այսօր Իրաք կը մնան, Մուսուլ, Քէրքուք կամ Պաղտատ:

### ԿԱՐՄՈՒՃԻ ՔԱՋԵՐԸ

Ուրֆայի Կարմուճ հայկական գիւղը հինէն ի վեր ունեցած է իր անուանի քաջերը: Ասոնք իրենց խիզախութեամբ և ուժով մեծ ազդեցութիւն ձգած են չրջակայ աշիրէթներուն վրայ և պատճառ եղած են, որ Կարմուճցին կիսանկախ վիճակ մը ունենայ մինչեւ 1915 թուականը:

Կ'արժէ, որ այս քաջերուն անունները պատմութեան անցնին եւ օրինակ ծառային մեր նոր սերունդին:

ՄՂԶ. ԱՐԹԻՆԵՆՑ ԱՐՈՒՇԸ. — Այս քաջին համբաւը կը սկսի այն օրէն, երբ խումբ մը Կարմուճցիներ ձորի մը մէջ կը պաշարուին քիւրսերու կողմէն: Այս վերջինները տեսնելով, որ հայերը անդէն են, կը մօտենան անոնց եւ կը սկսին ծաղրել զանոնք, սակայն, երբ կը հասկնան, որ Կարմուճցիները Իպրահիմ Փաշային մօտ կ'երթան, քիչ մը կը կակուղնան ու միայն կ'առաջարկեն իրենց ընկերացող

քիւրա բմբիչի մը հետ գօտեմարտիլ: Հայերը շուարած իրարու երես կը նային, որովհետեւ բմբիչը կատարեալ հըսկոյ մըն էր:

Յանկարծ անակնալ կերպով խումբին մէջէն առաջ կ'անցնի Մղձ. Արթիւնենց Արուշը եւ կը փաթթուի քիւրա բմբիչին: Ասոր ընկերները կը սկսին ծիծաղիլ եւ ծաղրական լուսականչութիւններ արձակել, իսկ Արուշին ընկերներն ալ վախով ու գողով կը հետեւին այս անհասար սոսքաբին, սակայն երբ կը տեսնեն, որ իրենց ընկերը քաջութեամբ կը սոսքարի, կը սկսին քաջալերել զայն: Երկար կը աւել գոյգ քաջերու պայքարը, ի վերջոյ քիւրա կը պարտուի եւ Մղձ Արթիւնենց Արուշը սաքը կը դնէ քիւրաին կարծիքին վրայ:

Կարմուճցիներու այս խումբը իր ճամբան շարունակելով կը հասնի Վերան Ծէճիբ: Երկու օր վերջ անոնք կը լսեն, որ բմբչամարա մը տեղի պիտի տնննայ եւ որուն ներկայ պիտի ըլլայ նաեւ Իպրահիմ Փաշան: Հետաքրքրութենէ մղուած, խումբը կ'երթայ մրցման վայրը, այնտեղ կը տեսնեն, ճամբու վրայ իրենց հանդիպած քիւրանէ, որ հրապարակ իջած է եւ սոսպարէց կը կարդայ բոլորին:

Արուշին ընկերները այս տեսնելով կ'ըսեն «ձօ Արօ, մարդդ է դարձեալ, մէջտեղ է կօ տեսնանք»: Սակայն Արօն կը խուսափի, առարկելով, որ ինքզինք լաւ չ'ղգար այդ օրը: Այս խօսակցութեան տկանջալուր կ'ըլլայ Միրոյենց Մարտօն, որ ինչպէս գիտենք անուանի քաջ մըն էր եւ Իպրահիմ Փաշային սիրելին: Մարտօն եղելութիւնը անմիջապէս Փաշային կը յայտնէ, որ Կարմուճցիներուն մէջ ալ քաջ մը կայ, որ կրնայ մրցման մասնակցիլ: Այս լսելով, Փաշան կը հրամայէ, որ Արօն մէջտեղ գայ: Այլեւս խուսափում չկար, Կարմուճցին ստիպուած հրապարակ կուգայ, եւ ահա քաջերու գօտեմարտը կը սկսի:

Ամբողջ ժամ մը անոնք զիրար կը քաշկրտեն, մինչեւ որ այլեւս Արոյին համբերութիւնը կը հատնի «ձօ քեզիկ փարայով մը ծախեցին ինձի» ըսելով քիւրա կը զարնէ գետին:

Իպրահիմ Փաշան առատ նուէրներով կը վարձատրէ Արոյին եւ զայն քանի մը օր հիւր կը պահէ իրեն մօտ: Այդ օրուրնէ սկսեալ, Արոյին համբաւը կը տարածուի շրջակայ աշխրէթներուն մէջ, եւ բոլորն ալ կը վախնան անոր շուքէն:

ՍԱՀԱԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ. — Այս քաջն ալ անուն կը շահի պատահական դէպքի մը ընթացքին:

Դարձեալ խումբ մը Կարմուճցիներ Սեւերէկի ճամբուն վրայ դէմ դիմաց կու գան նշանաւոր ՏՐԷՉ ՊԵԿԻ աւագակախումբի պետերէն՝ ՄԷՊՐՈՒՔԻՆ: Այս վերջինը կը հրամայէ Կարմուճցիներուն իրենց զէնքերն ու ունեցածները ձգել եւ հեռանալ: Կարմուճցիները կը ջանան խնդիրը անուշի կապել, սակայն, աւագակները անզրդուելի կը մնան, ճիշդ այդ պահուն Սահակ Յովակիմեան, յանկարծ կը յարձակի Մէպրուքին վրայ եւ զայն ոտքէն բռնելով կը նետէ ձիէն վար, աւագակատետը այնքան փորձառու մէկն էր, որ ձիէն վար իյնալու պահուն կրցած էր դաշոյնը մերկացնել ու զայն ուղղել Սահակի կործարին, սակայն այս վերջինին պողպատէ բազուկները կը յաջողին զինաթափ ընել Մէպրուքը: Միւս Կարմուճցիներն ալ Սահակի այս խիզախութենէն քաջախերտելով, կը յաջողին քիւրտերը պարտութեան մատնել:

Տրէճ Պէկը իմանալով, Սահակի այս քաջութիւնը զայն կը հրաւիրէ իր մօտ, Սահակ երթալու կը վարանի, սակայն աշխրէթական սովորութիւնները նկատի տանելով, ձի կը նստի եւ առանձինն կը հասնի անոր մօտ: Երբ Սահակ կը պատրաստուի ցեղապետին սիրար դրաւելիք խօսքեր արտասանել, ան կ'ընդհատէ զինքը ու կ'ըսէ, «Եկուր եւ աջ կողմս նստիր, որպէսզի բոլորն ալ տեսնեն, որ Տրէճ Պէկը գիտէ քաջերը յարգել»:

Սահակ Յովակիմեանի կեանքը յեցուն է այսպիսի արկածախնդրութիւններով:

ՓԷՉԵՆՑ ԴԱԻԻԹԸ. — Այս անուանի քաջին անունը հասած էր մինչեւ Տիգրանակերտ եւ Պիթլիս, նոյնիսկ քիւրտերը երգեր հիւսած էին անոր վրայ եւ կ'երգէին:

Փէչէնց Դաւիթին համբաւի օրերուն, Մայաթիոյ շրջանի աւատապետներէն Խէյիլը կ'որոշէ Դաւիթին վարկը կոտրել, առ այդ գօրաւոր խումբով մը Կարմուճի շրջանը կը հասնի եւ լեռները արածող զիւղին հօտը քէլով կը տանի, հովիւները խուճապահար Կարմուճ կը հասնին ու հաւար մը կը ձգեն թէ հօտերը տարին: Գիւղացիները կալերը կը վազեն, բոլորն ալ շուարած իրարու երես կը նային, որովհետեւ հովիւներու պատմածին համաձայն աւագակներու թիւը շատ մեծ էր ու դժուար էր զանոնք հետապնդել, ահա այդ պահուն Փէչէնց Դաւիթը կը հասնի եւ պոռալով կ'ըսէ «Ի՞նչ կեցեր էք, այսօր մեր ոչխարները տարին, վաղը մեր

կնիկները պիտի տանին, ով որ քաջ է ետեւէս թող դա»։ Դաւիթ այս ըսելով ձին կը մտրակէ եւ հովիւներուն ցոյց տուած ուղղութիւնը կը բռնէ։ Քանի մը վայրկեան վերջ, Դաւիթ ետեւ կը նայի ու կը տեսնէ, որ 30 — 40 Կարմուճ-ցի ձիաւոր երիտասարդներ իրեն կը հետեւին։

Աւազակները հետապնդող այս խումբին առաջին հանդրրուանը կ'ըլլայ Կէօլփիտը քրտական գիւղը, հոն չեն գտներ հօտը, կը շարունակեն Իշչարա, հոն ալ չեն գտներ, կը շարունակեն գէպի Եփրատ։ Արեւամուտէն առաջ խումբը կը հասնի Եփրատ գետին եզերքը, կը յարձակին յափըշտակիչներուն վրայ, երբ երկու քիւրտեր կ'իյնան եւ կը հասկնան, որ գործերնին Դաւիթին հետ է կը ձգեն հօտը, ու կը փոխչին։ Խումբը այդ գիշեր հանդստանալէ յետոյ, յաջորդ առաւօտ գիւղին հօտը իրենց առջեւ ձգած կը վերադառնան գիւղ յաղթական կերպով։

Փէչկնց Դաւիթը յաճախ կը մասնակցէր Իպրահիմ Փաշայի կազմակերպած ձիարշաւներուն և միշտ առաջին կը հանդիսանար հարիւրաւոր քիւրտ եւ արաբ մրցորդներուն մէջ։ Կը պատմուի թէ, Մահմուտ անունով քաջ էնէՁի մը, կ'որոշէ Կարմուճցիներուն գլխուն խաղ մը խաղալ, այս նպատակով կու գայ Կարմուճ իրը թէ ձի մը ծախու առնելու, Գեւոճան անուն գիւղացիի մը հետ սակարկութիւնը կը վերջացնէ ու ձին փորձելու պատրուակով կը բարձրանայ անոր վրայ, սակայն, յանկարծ առանց դրամ վճարելու սրարշաւ կը հեռանայ՝ ապշահար գիւղացիներու երեսին պռռալով, որ «Այսպիսի ձին միայն իրեն կը վայելէ»։ Լուրը կը հասնի Փէչկնց Դաւիթին, որ առանց իր ձին թամբելու կը նետուի անոր կռնակը, ու կը հետապնդէ յանդուգն աւազակը, ժամեր կ'անցնի եւ Դաւիթը չ'երեւար, գիւղացիները կը մտահոգուին և կը պատրաստուին զայն փրկուելու ելլել, սակայն կը նշմարեն հեռուէն մօտեցող փոչիի ամպ մը, քիչ վերջ Դաւիթ կը հասնի Գեւոճանի ձիուն հետ։


Կը պարզուի, որ ան յաջողած է հասնիլ Մահմուտին, որ զինք տեսնելուն պէս իր աւարը ձգելով փախուստ տրւած է, Դաւիթ հետապնդած է զայն, սակայն, աւազակը կրցած է ապաստանիլ Արար Շէյխի մը տունը եւ անոր Տէնիլ եղած է, Շէյխը խնդրած է, որ անոր կեանքը ըստ աշիրէթական սովորութեան իրեն ՊԱՇՈՒԷ, այսինքն ներէ անոր։

Փէչկնց Դաւիթի կեանքը լեցուն է եղած այսպիսի քաջագործութիւններով։ Մինչեւ այսօր վերապրող Կարմուճ-

ցիները որդւոց որդի կը պատմեն այս դէպքերն ու չեն կըրնար վերջացնեն։

**ՓէՉԿՆՑ ՅԱԿՈՒԸ .**

Որ ծանօթ է բոլորին Ապուլօպութ անունով։ Այս քաջին հաւասարող ձիամարտիկ ամբողջ Ուրֆայի շրջանին մէջ չկար, ձին արշաւելու ժամանակ, կրնար անոր կռնակէն իջնել փորին տակ ու այս կերպով, խուսափիլ թշնամիի նիգակներու տեղատարափէն։ Ապուլօպութը յաճախ կը մաս-



1946 ԻՆ՝ 108 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿԻՆ ՄԷՋ  
ԸՆՏԱՆԻՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԿՆԵԹԱԻ:

նակցէր աշիրէթական արշաւներուն և միշտ ալ դուրս կու գար անվնաս կերպով։

1946ին, 108 տարեկան հասակին ընտանիքով Հայաստան մեկնեցաւ, իր հետ էին երկու ամուսնացեալ զաւակները, Խորէն և Խաչեր, որոնք երկար տարիներ Փրանսական կարտ մօպիլ զինուոր էին և մեծ քաջագործութիւններ ցոյց տրւած էին, շքանշաններ ստացած էին և Խորէն հաճած էր Տասնապետի աստիճանին։

Երկար է շարքը Կարմուճի քաջերուն, դժբախտաբար կանուխէն չէ արձանագրուած անոնց կենսագրութիւնները և այսօր կորստեան դատապարտուած են։

### ԿԱՐՄՈՒՃ ԳԻՒՂԻ ՀԱՐՄԱՆԻՔԸ

Կարմուճի սովորութիւնն էր սղաքն ու աղջիկները կանուխէն նշանել և ամուսնացնել, եւ որովհետեւ տարիքով փոքր կ'ըլլային, մի քանի տարի նշանուած կը մնային, այս կերպով խնամիները պատեհութիւն կ'ունենային աւանդական սովորութիւնները լիուրի գործադրելու եւ զուարճութեան առիթներ ստեղծելու, զանազան տօնական եւ այլ պաշտօնական առիթներու ընթացքին:

Երբ հարսանիքի օրը որոշուէր, առաջին առթիւ կը ըսկըսէր հրաւերի գործողութիւնը, անշուշտ ներկայի տպագրուած քարթերը չկային հրաւերներու համար, բայց կար այլ սովորութիւն մը, տաշտ մը լեցուն ալիւր կը դնէին փեսացունէն դիմաց, ան թեւերը սօթթելով պիտի շաղէր այդ ալիւրը, կիներու լի լի ներուն եւ երգերուն մէջ խմորը պատրաստ կ'ըլլար, անկից վերջ «Հաց Կողողը» նշանաւոր Եախուտ պիպին, կ'անցնէր թոնիրին առջեւ եւ կը պատրաստէր «ՊէՏԻՆՔԷՇ» հացը (թոնիրին պատին քաշուած հաց), երբ այս հացերը պատրաստ ըլլային, լուր կը տըրւէր Խաթուն պիպին որ իր մասնագիտութիւնն էր, մէկ մէկ բաժնել հարսնիքի հրաւերեալներուն: Ուրեմն ով որ փեսային շաղած խմորին հացը ունենար, անիկա իրաւունք կ'ունենար հարսանեկան խրախճանքներուն ներկայ ըլլալու, հանդերձ ընտանեօք:

Խաթուն Պիպին, կարծես ստեղծուած էր այդ գործին համար, գիտէր իր պաշտօնը գլուխ հանել անհրաժեշտ ձեւակերպութիւններով, աղպէսներու (տարոս) շարքը մինչեւ եօթը պորտ կը հասցնէր եւ իրիկուն չեղած կը վերջացնէր իրեն վստահուած գործը:

Վերադարձին, որքան ալ արագ շարժած ըլլար, հացթուխ Եախուտ Պիպին հետը պիտի իյնար անպայման ու ըսէր «Տունդ շուքուի, քա կնիկ, չէնկէդ թուլնայ, ո՞ւր մնացիր»: Սակայն Խաթուն Պիպին տակը մնացողը չէր, անպայման պիտի պատասխանէր ըսելով «Գետինը մուտ, — Գետինն տակը մտիր, մուրը գլխուդ, քու խելքիդ թօնարին մէջայ ծոխլ գուրէլէն գատ ի՞նչ բանի կը հասնի եօր»:

Այսպէս ուրեմն զուարճախօսութիւնները կ'երկարին, մինչեւ, որ փեսացու Սիմոնին Քիրվէն (Խաչեղբայրը),

թըթվանենց Կրպոն, իր հեղինակաւոր ձայնը լսելի դարձնէ եւ հրաւիրէ, որ բոլորը՝ ձայներնին քաշեն ու գործի սկսին:

Նոյն օրը Սիմոնին հօրեղբայրը՝ Նազար Ամմին քաղաք-Ուրֆա — կը զրկուի՝ անհրաժեշտ բաները բերելու համար: Երբ Նազար Ամմին երկու երեք կենդանի առջեւը ձգած ճամբայ կ'իյնայ, ետեւէն կը պուռան, որ սըլլայ թէ մոռնայ նուշով շաքարը, պահարն ու տակտեղը, կուտն ու լէպլէպուն կամ Փատըղը:

Յաջորդ օր, փեսացու Սիմոնը իրիկուան դէմ պէտք է երթար բոլոր այն տունները, որոնց հաց բաժնուած էր ու հրաւիրել զանոնք այդ դիշեր իրենց տունը գալու, այս առթիւ բոլորն ալ կը սկսէին խեղճ Սիմոնին քաջքել՝ ըսելով «ձօ տղայ ինչու՞ գանք ձեր տունը, ի՞նչ կայ եօր, խեր ըննայ, մարիտ ուշա՞խ (գաւակ) մի բերերէ չէնէ պապիդ Հալապ մի կ'երթայա»: Այդ առաջին իրիկուան ուրախութիւնը յատկացուած էր «Հագապ Պաշիներուն» այդ պատճառով ալ ամէն տունէ երիտասարդները միայն կ'երթային հարսնետուն:

Երկրորդ օրը յատկացուած էր Քիրվէն (Խաչեղբօր) նոյն իրիկունը քիրվէն բարեկամները երբ կը մօտենան հարսնետան, դռնէն ներս շմտած կը պուռան «Քիրվէ, տունն ես մի, ո՞ւր ես մի, շես էրեւարա» ի հարկէ այս ձայնը առնելով, Սիմոնին հայրը և հօրեղբայրները դուրս կը վազեն հիւրերը ներս առնելու: Տունին փոքր տղան՝ Կրպուշիկը հիւրերուն ոտքերէն մուճակները եւ Փիլարները—կօշիկը հանէ ու կարգով կը շարէ ախորին մէջ:

Այդ իրիկուն քիրվէն ծանր ծանր կը նստի սեղանին գլուխը եւ երիտասարդները ձեռքերնին իրենց կուրծքին ծալած դիմացը կը կենան՝ անոր հրամանները գործադրելու համար: Բոլորին աչքը սակայն, Չեչմէճի Սարգիսին վրայ է, որ այդ օր յատկապէս քաղաքէն եկած է քէմանիով—Ջութակ — սուրի փայլ մը տալու հարսնիքին: Վերջապէս քիրվէն կը բարեհաճի հրամայել, որ օղի թասը (Պղինձէ խոշոր գաւաթ) չըջան ընէ հրաւիրեալներուն մէջ:

Օղին առատ է, շուտով բոլորին գլուխները կը տաքնան, Սարգիս իր քէմանիով թունդ կը հանէ բոլորին սրտերը: Յանկարծ քիրվէն թաս մի օղի եւ թիւթիւնին թապախան (սիկարէթին տուփը) կը զրկէ քէչոնց Վարդանին, բոլորն ալ կը հասկնան, որ քիրվէն կը հրաւիրէ դայն «Ձեռքը դնելու ականջին» այսինքն երգելու, չորս կողմէն կը



պոռան «Քիւրտի» մը, Քիւրտի մը, ու ահա Վարդանին ձայնը կը թնդացնէ ամբողջ գիւղը:

Այդ գիշերուան ուրախութեան կիներն ալ մասնակից են, սակայն առանձին սենեակի մը մէջ: Անոնք նուագածու շունին եւ ստիպուած են երգելով եւ ՏէՊԼԻԳԱՅՈՎ գոհանալ միայն:

Գիշերը ուշ ատեն, բոլորն ալ լօլիկ – հարբած – ոտքի կ'ելլեն տուն երթալու համար, սակայն, ժամ մը կը տեւէ, մինչեւ որ ամէն մէկը իր մուծակը կամ կօշիկը դանկ, յաջորդ օր յայտնի կ'ըլլայ, որ մեծ մասամբ իրարու կօշիկները, հագած են: Դուռնէն դուրս ելլելու ատեն, քերվէն բոլորին ետեւէն կը պոռայ, որ յաջորդ առաւօտ քաղաք – Ուրֆա – Հայր Աբրահամու բաղնիքը հրաւիրուած են փեսան լոգզնելու համար (լոգզնել), ով որ կը փափաքի թող հրամէ գայ:

Յաջորդ առաւօտ կանուխ, ձիաւորներու խումբ մը, փեսան մէջտեղնին առած Ուրֆա կ'իջնեն եւ ուղղակի Հայր Աբրահամի բաղնիքը կ'երթան: Մեծ ուրախութեամբ երգելով, պարելով փեսան կը լոգզնեն եւ լոգանքէն վերջ, քերվէն քաղաքի իր ազգականներէն մէկուն տունը կը տանի հրաւիրեալները, նախապէս Ուրֆայի քէպտալը, եղանակին յարմար, շուկայէն պատրաստուած կ'ըլլար արդէն, իսկ տընեցիներն ալ մըրուկ – կծու – հում քուֆթան պատրաստած կ'ըլլան:

Բաղնիքէն վերջ մարդիկ գայլի ախորժակ կ'ունենան, կ'ուտեն կը խմեն եւ իրիկուան դէմ ճամբայ կ'ելլեն դէպի Կարմուճ կը պատահի, որ ժամանակը ձմեռ ըլլայ, անձրեւ կամ ձիւն, սակայն ո՞վ է մտիկ ընողը, Կարմուճցին քաղքըցիին պէս «Հէննաման ոտիկ» չէ, որ այդպիսի բաներու կարեւորութիւն տայ:

Փեսայ բաղնիք դացողներու խումբը երբ Կարմուճի մօտենայ, գիւղին բնակիչները դուրս կը թափին տուներէն, իսկ փեսան շրջապատողները իրենց ձիերը կը հանեն ձիՐԻՏԻ, ալ ի՞նչ խաղեր, ի՞նչ տառյ զուռնա, երգ ու պար հալայ, հալայ, հէյ, հէյ, Ս. Վանէսայ լեռը արձագանք կուտայ:

Փեսացու Միմոնը տունէն ներս մտնելու ատեն ըստ կարողութեան երկու երեք ոչխար գետին կը գարնեն ու մատաղ կ'ընեն: Քահանան պատրաստ կեցած է արդէն մատաղը Օրհնելու համար, տղաքը շարական կ'երգեն, իսկ կիները լի լի կը կանչեն, օղին գետի ջուրին պէս կը հոսի:

Քահանային երէցկինը խոշոր ամանի մը մէջ շաղուած հինայով կը ներկէ բոլոր կիներուն եւ աղջիկներուն մասները, որմէ վերջ բոլորն ալ կը ցրուին իրենց տուները հանգստանալու:

Այդ գիշեր աղջկան տունը կը հաւաքուին, անոր մօտիկ ազգականները, հարսնացոյին եւ ներկաներուն ձեռքերը կը հինայէն ու կը սպասեն խնամիներուն կողմէն գալիք նըւէրներուն, ասիկա անհրաժեշտ էր, որպէսզի աղջկան տէրերը, հարսը հանելու ժամանակ դժուարութիւն չտայ: Կը պատահի, որ խնամիները ուշանան, այդ պարագային մեղադրանքի շարանը կը սկսի, արդէն աղջկան տէրերուն սիրտը նեղ է այդ օր, դժուար է աղջիկ տալ, սակայն մէկն ու մէկը կը միջամտէ, նայիս այդ կողմէն Մքոյենց Կրպօն ձայն կու տայ ու կ'ըսէ «Ծօ տուղայ Գարթալենց Նազարը ծախքէ փախող մարդ չէ», իսկապէս ալ յանկարծ դուռը կը զարնուի եւ տղուն կողմէն ԹէնէՔի մը օղի, հէպֆէ մը շաքար, չուալ մը խնձոր շալկած պատանիներ ներս կը մտնեն: Այս բոլորը անմիջապէս կը բաժնուի ներկայ ազգականներուն կամ հիւրերուն:

Նոյն իրիկունը, աղջկան կողմէն տարիքաւոր եւ ծեր մարդիկ ու կիներն են, որ կ'երթան փեսացուին տունը: Փանըսները – լսպտերներ – կը վառուին, մէկ ծայրերնին փողոցն է արդէն, սակայն, տունէն ներս փաթըրթի մը – իրարանցում – փրթերէ, կ'ուզեն մենծ Անէն – մեծ մայրը – միասին տանիլ, պառաւը կ'ընդիմանայ, չ'ուզեր երթալ «Գլուխս մենծ քար մը ընկներ, ձեռքմ'ուտ խըլըսէի» կ'ըսէ: Ի վերջոյ կը յաջողին զայն տեղէն շարժել: Այս թափորը երբ խնամիներուն տան առջեւ կը հասնի փեսացուին կողմէն ծերունիները անոնց ընդառաջ կ'երթան ու մեծ պատուով ներս կ'առաջնորդեն զանոնք:

Այդ գիշեր կ'ուտեն, կը խմեն եւ մեկնելու ատեն փեսացուին հօր կողմէն արուած զոյգ մը ապրճան (ապարանջան) եւ կամ քանի մը հատ ՂԱՁԻ առնելով տուն կը վերադառնան խնամիները: Ասոնք երբ գոհ մնացած են հիւրասիրութենէն, ճամբու ընթացքին կատակներ կ'ընեն, Անէին հետ կ'իյնան, նայիս մէկը կ'ըսէ «Ծօ Կրպուչիկ, տուղայ Փանըսը բեր, պառաւը կորսուեր է, չրնայ քի խնամոնց տունը մնաց»:

Մենք դասնանք փեսացուին տունը: Խնամիները երթալէն վերջ, պահ մը լուռ կը մնան ներկաները, ապա մէկն ու միւսը կ'ըսէ «Տուղայ զընամիչ մենէք աղջկան տիրուն»



համար քիչ մը զօր է էսօր»։ Այլեւս բոլորին ալ բերանները կը բացուին, ամէն մէկը բան մը կ'ըսէ, իսկ միւս կողմէն օղիին սէյնին, սեղանը մէջտեղ կու գայ, առաջին անգամ Նազար Ամմին է, որ թասը կը լեցնէ եւ շրթունքին տանելէ առաջ կ'ըսէ «Բարով է կերէք, աղպէնը գընամիշ էնողին տունը ըննայ, Աստուած ինքը չամչցնէ»։

Այս յառաջաբանէն վերջ, այլեւս ամէն մէկը մաղթանք մը ընելով օղիին թասը գլուխը կը քաշէ։ Այսպէս մինչեւ լոյս կ'ուտեն, կը խմեն ու կը լօլիկնան - հարբին - :

Վերջապէս կը հասնի պսակին օրը, հարսնիքին բոլորն ալ նոր զգեստներ կը հագնին, էրիկ մարդիկ, շիթարա զրպուն, մէջքերնին կապած լայն շալեր, իրենց հագած կարմիր մուճակներով ծանր ծանր կը քալեն։ Կիները հագած կ'ըլլան, ջրթիկ տարախլի գպուն, վրայէն չուխայէ Փէրմանէ՝ որ մինչեւ մէջքերնին կը հասնի, անոր վերջաւորութեան կը փայլին արծաթէ քէմէրները (գօտի) վզերնին ձըգած կ'ըլլան ոսկի գօտերը (չարոց) երեսնին ձգած կ'ըլլան Պաղտատի գունաւոր վալա, թեւերնին շարուած ապարանջանները կը զնգան իւրաքաչիւր շարժումի առես։

Այսպէս հանդիսաւոր կերպով եւ շորորայէն, բոլորն ալ կ'երթան ներկայ ըլլալու Ս. Պսակի արարողութեան։ Միւս կողմէն քանի մը կիներ հարսցունին տունը կ'երթան հարսը եկեղեցի տանելու։ Անոնք երբ կը մօտենան հարսին տան կը սկսին երգել «Եկան տանողնին, շար շար գրողնին, մոմեր վառողնին, հոգի հանողնին» հալայ, հալայ, հէյ, հէյ, լի լի լի։ Այս երգերէն վերջ փեսացու Սիմոնին մայրն ձայնը բարձրացնելով կ'ըսէ «Տէ, տէ, ձայնմընիդ կարեցէք, ուշադիս մի շարչրկէք»։

Հարսին տունէն բաժնուելն ալ ժամանակի կը կարօտի, նախ հարսին պարագաները կը սկսին դանազան առարկութիւններ ընել, ծանր ծախել ինքզինքին, ապա երբ բաժանման պահը կու գայ, հարսնցուն կը սկսի մէկ մէկ ներկաներուն ձեռքը համրուրել, երբեմն լաց ու կոծ կ'ըլլայ, երբեմն աղջկան եղբայրը բարկանալով խնդիրներ կը ըստեղծէ, կը պատահի, որ հայրը յուզուելով կը սկսի պոռալ, կանչել իր կնոջ վրայ, թէ՛ ինչո՞ւ աղջիկ բերիք, ծընողին ալ բերողին ալ կը քաշէ։

Օրէնք է, որ հարսը տանելու համար խնամիները զարդարուած ձի մը բերած ըլլան իրենց հետ։ Հարսը ձի նստած կը տարուի եկեղեցի, փեսացու՝ հարսնետոններուն հետ արդէն եկեղեցի հասած կ'ըլլար։

Ս. Պսակի արարողութիւնը կը կատարուի աւանդական կարգով։ Եկեղեցիին մէջ կողք կողքի կեցած են, Քէօսենց կրպոն, Մատառենց Ներսոն, Շէխենց Հոսէն, վերջապէս ուտող, խմող, արբեցողըսլոր էրիկ մարդիկը, ասոնք այնպէս երկիւղածութեամբ կեցած են, այնպէս եռանդով խաչ կը հանեն, որ կարծես Քրիստոսի քովէն նոր իջած մէկ մէկ սուրբեր են, ո՞վ կ'ըսէ թէ, ասոնք երեք օրէ ի վեր խմելէ եւ երգելէ աչք չեն բացած։

Ս. Պսակը լրանալէն վերջ, հարսը կրկին կը նստեցնեն, ձիուն վրայ եւ քանի մը հոգիով կը տանին տուն, սակայն, փեսային դարձը եկեղեցիէն կապուած է մասնաւոր արարողութիւններու, նախ եկեղեցիէն դուրս գալէ վերջ, քանի մը երիտասարդներ իրենց գունաւոր թաշկինակներուն ձոթերը (ծայրերը) իրարու կը կապեն եւ փեսային դիմաց շղթայ կը կապեն, անկէ վերջ, խումբ մը երիտասարդներ ալ պահակ կը կենան անոր ետեւը, երկու կողմէն ալ նուագողները կը շարուին ու այսպէս թափօրը ճամբայ կ'ելլէ, սակայն պատի - փոքր - ակէն մինչեւ մենծ ակ, անկէ կողմնակի փողոցներէն մինչեւ տուն հասնիլը կարելի է տասը տեղ դուռներու առջեւ թափօրը ստիպուած կ'ըլլայ կանգ առնելու, իրենց դիմաց բացուող օղիի, գինիի եւ ուտելիքներու սեղանները մաքրելու համար։

Ժողովուրդը փեսային տունը հասնելէ վերջ, հէրիսէի սեղանը արատրաստուած կ'ըլլայ արդէն, հէրիսէի երեսին իւղը այնքան առատ կ'ըլլայ, որ մարդոց պէտքերէն վար կը վաղէ։ Այդ օր ալ մինչեւ կէս գիշեր կ'ուտեն, կը խմեն եւ քէօս սարիօշ, իրար տուն կը հասցնեն։

Յաջորդ օրերուն, նուագազոյն մէկ շարաթ հրաւէրները իրարու ետեւէ կը շարունակուին, օր մը քիրվէն, օր մը հագապ պաշին, ուրիշ օրեր կարգով այս կամ այն ազգականը կամ բարեկամը կամ դրացին։ Մոռցանք յիշելու փեսայի հագուստ հագնիլը եւ պսակի յաջորդ օրուան փեսայ պագնումը, որ մեծ ուրախութիւններով տեղի կ'ունենար։

Հիմա երբ այս սովորութիւնները եւ աւանդութիւնները չկան ու մարդիկ իրենք զիրենք աւելի զարգացած կը նըկատեն, չէ՞ք կարծեր, որ կարմուճի եւ ընդհանրաբար հայկական մեր հին սովորութիւններն ու աւանդութիւնները աւելի անկեղծ էին, մեծերուն հանդէպ յարգանք կար, հարազատներու միջեւ սէր եւ համերաշխութիւն կար եւ մանաւանդ բոլոր սրբութիւններուն հանդէպ հաւատք եւ դժհոգութեան ՈԳԻ կար։

Երանի անցեալ օրերուն, որ մեր պապերը ապրեցան, ափոսս, որ մենք կորսնցուցինք մեր բոլոր հին սովորութիւններն ու աւանդութիւնները:

Էկան տանողներն, շար շար գրողներն,  
Մոմեր վառողներն, հոգի հանողներն,  
Էսօր տուվաղ է, հարսնիք քէֆ խաղ է,  
Հարսին, մօր պապուն, էրեսա պաղ է:

Բերէք տէֆ սագա, հիւսեցէք մագա,  
Աղքէկ աղջրներն՝ քէչեցէք նագա:  
Քէլէ աղջին, քէլէ, աշխարքի հալ է,  
Մօր պապուն բրթած՝ աղջին դրգալէ:

Գլխուն քողք կէնէչ, վիզա օսկուն Սաչ,  
Կոխած տեղերա բուննի, վարդ կէնէչ:  
Մեր էգգին պոռ է, թուփա խոշոր է,  
Աղջրներն մօրը, էս դիշեր զօր է:

Աղջին քնքուչ է, ճամբաքա փուչ է,  
Հէմ կուլամ, հէմ կ'երթամ, էրիկն անուչ է:  
Մեր հարսա խէրով, փէսան պեխերով,  
Աթլազ տեղերով, կէնէչ քօղերով:

Աղպէնա չեղողին, գրնամիչ էնողին:  
Աստուած մուրաղ տայ, կարգուիլ ուզողին:

Շընոֆօր, շընոֆօր, հըզգար շընոֆօր,  
Աղկէկ աղջրներն, փեսան շընոֆօր:

Հարսնիքա հարսին, հարսլ քաջ փեսին,  
Հարա, Հարա, Հարա հէյ, Լի Լի Լի Լի:

Այս ոտանաւորը երգելով, վերջին անգամ հարսը տունէն եկեղեցի կ'առաջնորդէին:

Պատմութենէն յայտնի է արդէն, թէ Ուրֆան ինչ ծանր ցնցումներու ենթարկուեցաւ 1895 ի դէպքերուն ընթացքին եւ ինչ յամառ ճիգերով կրցաւ դարձանել իր կորուստները:

1908 ին երբ Օսմանեան Սահմանադրութիւնը հռչակեցաւ, Ուրֆայի Հայութիւնը արդէն Փիզիքապէս եւ տընտեսական գետնի վրայ վերագտած էր իր նախկին վիճակը:

Քաղաքին մէջ ամփոփուած հայութիւնը կ'անցնէր 30 000ը, մօտակայ միակ հայ գիւղը՝ Կարմուճը նոյնպէս կը հաշուէր 5000 էն աւելի թիւ մը: Հայախօս ատանց բացառութեան, ուժեղ ազգային նկարագրով, տանդապաշտ, խառնուած քով ըմբոստ ու միանգամայն կտրիճ այս զանգըւածը կը գտնուէր գեղեցիկ կարելիութիւններու դիմաց, ու ահա յառաջդիմութիւնը կը սկսէր ոչ թէ սովորական քայլերով, այլ ոստումներով:

Տենդայոյց ու մեղուաջան աշխատանքի էին լծուած հասարակութեան բոլոր խաւերը, կեանքը կ'եռար ազգային հաստատութիւններու շուրջ: Ազատութիւնը առիթ կու տար, որ երեսան դան միութիւններ ու կազմակերպութիւններ, գրադարաններ, եւ ընթերցատուններ: Հարանները լեցուն կ'ըլլային հասարակութեամբ: Քաղաքականապէս սկսաւ դաստիարակուիլ ժողովուրդը: Աննկարագրելի խանդավառութիւն կը սանդղծին մօտաւոր անցեալի յեղափոխական դէպքերը, որոնցմէ անտեղեակ էր մնացած Ուրֆան եւ Կարմուճը՝ իրենց հեռաւորութեան ու մեկուսացած վիճակին պատճառով:

Յեղափոխական կուսակցութիւններ հրապարակ կու գան, երիտասարդութիւնը կը համախմբուի անոնց շուրջ: Բայց երկար պիտի չտևէր այս դարգացումն ու յառաջդիմութիւնը, 1915ի տեղահանութիւնը, վերջ պիտի տար դարաւոր Ուրֆայի եւ Կարմուճի հայութեան:

Ա. Համաշխարհային պատերազմէն վերջ, հայութիւնը կրկին դարձաւ իր հայրենիքը, երբ զինադադարի լուրը իմացուեցաւ, վերապրող Կարմուճցիները անհամբեր դարձան, կ'ուղէին ժամ առաջ գիւղ հասնիլ, եւ տէր դառնալ իրենց պապենական օճախին: Շատեր կը յուսային իրենց կորուստները գտնել, որովհետեւ տարագրութեան ճամբաներուն վրայ՝ Արարներուն եւ Քիւրտերուն քով մնացած Կարմուճցիներու թիւը քիչ չէր:

Ողջ մնացող Կարմուճցիներու մեծ մասը կը գտնուէր Իրաքի կողմերը, Մուսուլ, Քէրքուք, Պաղտատ, մաս՝ մը երիտասարդները Թրքական բանակին մէջ կը գտնուէին, սակայն չորս տարիէ ի վեր մարդ մարդէ լուր չունէր, յայտնի չէր թէ ո՞վ ողջ է եւ կամ ո՞վ մեռած:

1919ի սկիզբը, Իրաքի Անդլիական Իշխանութիւնները դիւրութիւններ սկսան տալ հայ գաղթականներուն վերադառնալու իրենց հայրենիքը: Այս պատեհութենէն օգտուեցան շատերը, իսկ մաս մըն ալ հոն մնացին, ընդհանուր էր,

ամէն կողմէն սկսան հասնիլ չորս տարիէ ի վեր տարագրութեան մէջ եղող հայերը:

Կարմուճցիները դիւղ հասաւ, ինքզինք վտաւ սրտածըմիկ նոր տեսարանի մը դիմաց, ամէն կողմ սուրբակ, անօրէնները քանդած էին տուն, տեղ, եկեղեցի, դպրոց: Սակայն բուն ողբերգութիւնը պարտէզներուն մէջն էր, որ պիտի պարզուէր: Գիւղացիներուն համար տունները այնքան արժէք չունէին, որքան պարտէզները, ու երբ բոլորն ալ տեւան տարիներու իրենց արիւն քրտինքով հասցուցած պարտէզները արմատախիլ եղած, ողբի ազազակ մըն է, որ կը բարձրանայ չորս կողմէն:

Կարմուճը գաղթականութենէն առաջ հազար տուն զուտ հայութիւն կը հաշուէր, հազար պարտէզ եւ այգի ունէր, ժողովուրդին մէկ տասներորդը միայն վերադարձած էր, սակայն պարտէզները ամբողջութեամբ փճացած էին:

Վերջին ամիսներու ընթացքին զինուորութեան մէջ վերանսուողներն ալ վերադարձան, եղան մօտաւորապէս 200 ընտանիք: Բոլորն ալ գործի կը լծուին գիշեր ցերեկ, պէտք է աշխատիլ, արտերն ու պարտէզները ցանելու եւ ծառ տընկելու եղանակն է, փճացածին տեղը հասցնելու է երկու ամիս վերջ՝ վարնան, աւերակ Կարմուճը եղանակին հետ սկսաւ կանաչնալ, ծիլ ու ծաղկիլ:

Հրաշք պատահած էր, այլեւս բոլորին դէմքին վրան ժպիտ կար, մոռցած էին իրենց սիրելիներուն կորուսար, տարիներու տառապանքները: Հողն ու անոր կապուած աշխատանքը՝ մեծագոյն միտքարանքը դարձած էր վշտահար հոգիներուն:

Վերջապէս Կարմուճի Ազգային կեանքը մտած էր բնական ընթացքի մէջ, սակայն հայր ե՞րբ քիչ մը երկար խընդացած է, աշխարհը կրկին կը սկսի խառնուիլ, Անգլիացիները քաշուի տեղը Փրանսացիներու գայ, Ներսիսեան քաղաքականութիւն, բայց միշտ ի նպաստ թուրքին, ոչ թէ հայուն, ոչ թէ Գրիստոնեային:

Անգլիացիներու ու ապա Փրանսացիներու Ուրֆա Կարմուճ գալէն մօտ մէկ տարի վերջ Քէմալական շարժման ալիքները կը հասնին Ուրֆա — Կարմուճ: Փրանսական դէպքերու օրերուն Կարմուճցիները կը յաջողին դիմադրել շըրջակայ գիւղերէն իրենց վրայ յարձակող աշխրէթներուն եւ ազատուիլ մեծ փորձանքէ: Երբ Ուրֆացիները յաջողեցան կառավարութենէն մեկնումի հրաման ստանալ, Կարմուճ-

ցիներն ալ արդէն պատրաստ էին, որովհետեւ այդ օրերուն իրենց գիւղը եկած հաստատուած էր Իրաքցի ԱճէՄԻ ՓաշէԱն եւ կը ստիպէր Կարմուճցիները, իրենց ունեցածը ձգել ու հեռանալ:

Կառավարութիւնն ալ քանիցս տեղեկացուցած էր, որ Աճէմի Փաշան թուրքերուն մատուցած իր ծառայութիւններուն համար, Մուսթաֆա Քէմալին կողմէ վարձատրուած էր Կարմուճի կալուածներով:

Պատմական Ուրֆայի եւ Կարմուճի հայութեան վերջին մնացորդները, մինչեւ 1923 ի վերջաւորութեան հեռացան իրենց ծննդավայրէն, իրենց դարաւոր հայրենիքէն, դէպի Սուրիա, դէպի Արաբական աշխարհ, յետոյ տարիներու ընթացքին ցրուելու համար աշխարհի չինգ ցամաքամասերուն վրան:

Այժմ հայութիւն չկայ Ուրֆայի եւ Կարմուճի մէջ, ամբողջ երկու հազար տարի հայ անունը անրաժան եղած էր Ուրֆա—Կարմուճէն: Ու եթէ անոնք էին կրցած բիւրաւոր նահատակներուն աճիւնները փոխադրել իրենց հետ, սակայն կը տանէին անոնց յիշատակը եւ ազատական ոգին, աշխարհէ աշխարհ:

Ուրֆայի եւ Կարմուճի այդ Սուրբերը, հին դարերէն մինչեւ մեր օրերը, հաւատարիմ մնացին հայութեան, բոլոր սրբութիւններուն:

Անոնց կտակն է հետեւիլ, իրենց ճամբուն, ըլլալ կատաղի հայեր ազգային ոգիով ու ցեղին առնական ոգին անմեռ պահել՝ իրարու յաջորդող սերունդներուն մէջ:

### ԿԱՐՄՈՒՃՑԻՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

Ինչպէս ամբողջ հայութիւնը, նոյնպէս Կարմուճցիներն ալ Արտասահմանի մէջ, անմիջապէս կազմակերպուեցան եւ Հալէպի մէջ ունեցան Կարմուճի Ազգատախնամ Միութիւնը՝ 1934ին, հիմնադիրները կ'ըլլան, Ներսէս Մղձ. Ներսէսեան, Յովսէփ Փախանեան, Սողոմոն Արծիւեան, Մելքոն Կարկոցեան եւ Մկրտիչ Պալաֆեան:

1946ին Ազգատախնամ Միութիւնը վերակազմուեցաւ Հայրենակցական Միութիւն Անուան տակ եւ Անդամները եղան, Ներսէս Մղձ Ներսէսեան, Միհրան Փախանեան, Աւետիս Գազանճեան, Մկրտիչ Յարութիւնեան, Յովհաննէս Փախանեան եւ Գասպար Էմիրխանեան:



1936ին կը կազմուի Ուրֆա կարմուճ Տիկնանց խառն Միութիւնը, մի քանի տարի վերջ կարմուճցիները կը բաժնուին և կ'ունենան առանձին Տիկնանց Միութիւն հիմնադիրները կ'ըլլան, Տիկին Նկար Տէրտէրեան, Արշալոյս Մղձ. Ներսէսեան, Մարի Օզնայեան, Սառա Ռեկոյեան, Սաթենիկ Կարկոյեան, Մարիամ Արուշեան, Լուսին Շուշանեան և Սաթուն Էմիրխանեան:



Նստած ձախէն աջ՝ Տիկին Մաքրուի Ճանցեան, Արժ. Տ. Ասոմ Ա. Քենյ. Քէհեան, Գերշ. Տ. Մուրէն Ս. Արք. Գարարոյեան, Տիար Ներսէս Մղձ. Ներսէսեան, Տիկին Արշալոյս Մղձ. Ներսէսեան.

Ոտքի ձախէն աջ՝ Տիկին Սիրվարդ Էշխանեան, Տիկին Արշալոյս Գասպարեան, Տիկին Էօժէնի Երանոսեան, Տիկին Աղանի Գազանեան, Տիկին Եղիաբէր Գույումեան, Տիկին Անբուանէր Մղձ. Ներսէսեան

Տարիներու ընթացքին մեկնողներու և մահացողներու տեղ կու գան նորեր, Տիկին Աղնիւ Մղձ. Ներսէսեան, Սառա Յովակիմեան, Մարի Մինասեան, Անթուանէթ Մղձ Ներսէսեան, Մաքրուհի Ճանցեան, Աղանի Գազանեան, Արշալոյս Գասպարեան, Եղիաբէթ Գույումեան, Էօժէնի Երանոսեան, Արուսեակ Պարտիզպանեան, Սիրվարդ Իշխանեան:

Ներկայ Վարչութեան Անդամներն են, Արշալոյս Մղձ Ներսէսեան, Սեդա Ճանցեան Աղանի Գազանեան, Ար-

շալոյս Գասպարեան, Էլիզապէթ Յովակիմեան, Մովիկ Գույումեան և Նոյեմի Տէկիրմէնեան:

Կարմուճի Տիկնանց Միութիւնը, յարատեւ և աշխոյժ զործունէութիւն ունեցած է, բոլոր զպրօցներու մէջ սաներ կը պահէ, Հայ ծերանոցէն ներս 10.000 Ս. Ոսկի նուիրելով սենեակի մը վրայ մարմարէ քար մը դեակցած է իր Անունով, Հայ ծերանոցէն ներս ունի իր ճաշի օրը, Հայաստանի երկրաշարժի ազդեցութիւնը հանգանակութեան մասնակցած է 20.000 Ս. Ոսկիով, Սորէնեան Փոնտին նպաստած է 5.000 Ս. Ոսկիով, Տէր Զօրի և Թէլ Ապիատի եկեղեցիներու շինութեան Փոնտին իր բաժինը բերած է ինչպէս նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ նոտարաններու շինութեան Փոնտին:



Նստած ձախէն աջ՝ Տիկին Արշալոյս Մղձ. Ներսէսեան, Արժ. Տ. Ասոմ Ա. Քենյ. Քէհեան, Գերշ. Տ. Մուրէն Ս. Արք. Գարարոյեան, Տիար Ներսէս Մղձ. Ներսէսեան, Տիկին Արշալոյս Գասպարեան:

Ոտքի ձախէն աջ՝ Տիկին Սիլվա Ճանցեան, Տիկին Աղանի Գազանեան, Տիկին Էլիզապէր Յովակիմեան, Տիկին Նոյեմի Տէկիրմէնեան, Տիկին Սիլվա Ճանցեան:



Միութեան հիմնադրութեան քառասնամեակին, ճաշկերոյթի ընթացքին, Արժ. Տէր Աստմ Ա. Քհնյ. Քէճեանի ձեռամբ պարզեատրուած է Միութեան Հիմնադիրներէն և Ատենապետուհի Տիկին Արշալոյս Մղձ Ներսէսեան Ոսկի մետալով, իսկ անդամները պարզեատրուած են արծաթեայ մետալով:

Կարմուճի Տիկնանց Միութիւնը զնահատելի աշխատանք կը տանի, օգտակար կ'ըլլայ իր շքանք հայրենակիցներուն և կը քաջալիբէ Ազգային Հայրենակցական բոլոր ձեռնարկները, վարձքերնիկ կատար աշխատասէր եւ անձնուրաց սիկիւններ:

Սուրբոյ շրջանին մէջ գտնուող Կարմուճիները Հալէպէն մինչև Գամիշլի մեծ ընդունակութիւն ի յայտ բերած են մեքենադիտութեան մէջ ու զնահատուած պետութենէն և ժողովուրդէն, ու յայտնի դարձած հրապարակի վրայ:

Հալէպի մէջ առաջին վարպետներէն կ'ըլլայ Սարգիս Յովակիմեան, բոլոր արհեստաւորները իրեն ՎԱՐՊԵՏ կ'ըսէին, տասնեակ տարիներով բազմաթիւ աշակերտներ իր ձեռքին տակէն վարպետ ելած են և դարձած խանութի, ընտանիքի ու զուակներու տէր: Գամիշլի մէջ եւս առաջին մեքենադիտութեան արհեստաւորները կ'ըլլան Կարմուճիները, կ'ունենան մեծ գործատեղիներ եւ բազմաթիւ գործաւորներ, յայտնի անուն ունին, Մովսէս Մղձ. Ներսէսեան, Գարրիէլ Սարգիսեան, Յովհաննէս Շահինեան: Յովհաննէս Շահինեան կանուխ երիտասարդ տարիքին մահացաւ բայց գործը շարունակուեցաւ Շահինեան եղբայրներու կողմէ, գլխաւորութեամբ Բարգէն Շահինեանի:

Գամիշլի մէջ կը կազմուի Ուրֆա Կարմուճ Հայրենակցական խառն Միութիւնը, անդամները կ'ըլլան, Մովսէս Մղձ. Ներսէսեան, Գարրիէլ Սարգիսեան, Աբրահամ Գասպարեան, Յովհաննէս Շահինեան, Յակոբ Ոսկերիչեան, Արշակ Սալխանեան, Ներսէս Ղարիպեան:

Ուրֆացիները եւ Կարմուճիները ուր որ եղած են, այնտեղ ազգային կեանք ստեղծողներ եղած են և իրենց գործօն մասնակցութիւնը բերած են:

Հայրենակցական, երիտասարդաց, Տիկնանց Միութիւններ, Մշակութային ձեռնարկներ, Գաղափարական ուղղութիւններ, այս բոլորին մէջ մեր Հայրենակիցները կարեւոր դեր կատարած են, ուր որ գտնուած են:

Համառօտ այս գրքոյկը շատ քիչ է Կարմուճի համար, այս ալ եղեոնի արդիւնքն է, այնքան պատմական արժէք

ներկայացնող արձանագրութիւններ կորսուած են, մեզի հասածները անբաւարար են իրական պատկերը ներկայացընելու համար:

**Մղձ. ՆԵՐՍԷՍ Մղձ. ՆԵՐՍԷՍԵԱՆ.**

Այս անուանի գիւղապետին քաջութիւնը ի յայտ կու գայ 1895ի դէպքերու ընթացքին: Երբ Ուրֆայի դէպքերուն լուրը կը հասնի, առաջին վայրկեանին գիւղացիները մեծակին գլուխը հաւաքուած շուարումի կը մատնուին, այդ վայրկեանին է, որ հրապարակ կու գայ Մղձ. Ներսէսեան վրափախը գետին զարնելով կ'ըսէ «ձօ, ի՞նչ կեցեր էք, ամէն մարդ իր զէնքին թող փարի, այդ անօրէնները ո՞վ են, որ կարենան մեր գիւղը մտնել»:

Պատմութենէն գիտենք, որ Կարմուճիները, շնորհի իրենց ցուցահանած քաջութեան անվնաս դուրս եկան մեծ աղետէն:

Ամէն պարագայի տակ պիտի ըսենք, որ այս փոքր հատորիկը պահողները եւ մանաւանդ բովանդակութեան հետեւողները ցոյց տուած պիտի ըլլան իրենց Ազգասիրութիւնը եւ Հայրենասիրութիւնը:

Ապրի Կարմուճի Հայկական ոգին, աշխարհի մէջ ցիր ու ցան թէ Կարմուճիներուն և թէ ամբողջ հայութեան մէջ, որ Արտասահմանի մէջ դիմանանք ընդ երկար ճերմակ ջարդին դէմ եւ բախտաւոր օր մը հասնինք ապրելու մեր Հայրենիքին մէջ հանգիստ եւ ապահով:









հատանքի խօսքեր եղան անհատներու և կազմակերպութիւններու կողմէ:

Տէր և Տիկին Սահակեաններ իրենց Հալէպ այցելութեան առթիւ, փափաքեցան աղքատ ուսանողաց հիմնադրամ մը հիմնել:

20.000 Ս. Ոսկի տրամադրեցին, որ այս գրքոյկը «ՀԱՅ-ԿԱԿԱՆ ԿԱՐՄՈՒՃԸ» 500 օրինակ տպագրուի և Հալէպի, Կարմուճի Տիկնանց Միութեան տրամադրութեան տակ գրուի և հասոյթը գումարուելով Ազգային Առաջնորդարան պահ դրուի և ամէն տարի տոկոսէն օգտուին, Կարմուճցի չքաւոր ուսանողներ, ձգելով սաներու ընտրութիւնը Կարմուճի Տիկնանց Միութեան:

**ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻՔ**

Կարմուճի Տիկնանց Միութիւնը, շնորհակալութիւն կը յայտնէ Տէր և Տիկին Յովսէփի և Մատլէն Սահակեաններուն, իրենց այս զեղեցիկ և օգտակար զաղափարի յղացումին համար:

Կարմուճի Տիկնանց Միութիւնը, ինչպէս նաեւ Տէր և Տիկին Յովսէփի և Մատլէն Սահակեաններ մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնեն Արժ. Տէր Ատոմ Աւաղ Քհնյ. Քէհեանին, որ սիրայօժար կերպով աշխատասիրեց և պատրաստեց սոյն գրքոյկը:

**Օգտուած .-**

Դիւցազնական Ուրֆան և իր Հայրդիները գրքէն, Հեղինակ՝ ԱՐՄ ՍԱՀԱԿԵԱՆ, տպագրուած 1955ին,

Պէյրութ — Լիբանան:



**ԱՐժ. Տ. ԱՏՈՍ Ա. ՔԻՆՅ. ՔԷՅԱԵԱՆ**



ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՐ՝

**ԱՐԺ. Տ. ԱՏՈՍ Ա. ՔՅՆՅ. ՔԷՅՆԱՆ**

Եթէ օր մը, պէտք պիտի ըլլայ զրել պատմութիւնը, քաներորդ դարու երկրորդ կէսէն ասդին, Բերիոյ Թեմի Ազգային և Եկեղեցական Իշխանութեան, զայն ամբողջացուցած չենք ըլլար, առանց յիշելու հոն Արժ. Տ. Ատոմ Ա. Քչնյ. Քէհեաները:

Աւագանի անունով Միջայէլ որդի Ուրֆացի Պետրոսի եւ Մարիամի, ծնած է Ուրֆա 1921 - ին:

Ան, տակաւին մանուկ, իր ծնողքին հետ գաղթականի ցուպը ձեռին, Ուրֆա քաղաքը Փրանսացիներու կողմէն պարպուելէն ետք, կու գան հաստատուիլ Սուրիա. նախ Թազա ապա կարճ շրջան մը վերջ Տէր Զօր:

Միջայէլ նախակրթարանի ուսումը կը ստանայ Տէր Զօրի Ազգային Վարժարանին մէջ: Երկրորդական ուսման համար կը յաճախէ քաղաքին Լատին Քարուչիեան Վարժարանը: Տարի մըն ալ կ'աշակերտէ Հալէպի նորահաստատ 1935 - 1936 Միթարեան հայրերու վարժարանին: Այս շրջանին ծնողքը կը փոխադրուին Գամիշլի եւ այդ օրերուն ճամբորդութեան դժուարութիւններու պատճառով կը մնայ Թերաւարտ ու կը վերադառնայ տուն: Բայց ինքնաշխատութեամբ կը շարունակէ զարգանալ եւ կ'արձանագրէ յառաջ դիմութիւններ իր կեանքի ընթացքին:

Տուն դարձին, Միջայէլ, կ'ըլլայ պաշտօնեայ Հացահատիկի (Օ. Սէ. Փ.) Գրասենեակի, աւելի վերջ նոյն պաշտօնով կը փոխադրուի Հալէպ: Գրասենեակին զոցուելէն ետք, կը սկսի պաշտօնավարել Հալէպի Ելեքտրական Ընկերութեան մէջ, ուր կը ծառայէ աւելի քան տասը տարի, մինչեւ քահանայ ձեռնադրուիլը, 28 Փետրուար 1954ի Բուն Բարեկենդանի օրը, ձեռամբ Երջանկայիշատակ Զարեհ Ս. Եպսկ. Փայասլեանի. ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Քահանայական ձեռնադրութիւնն ու Ս. Օծումը տեղի կ'ունենայ Հալէպի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, իր հետ ունենալով ուրիշ չորս օժակիցներ:

Միջայէլ Քէհեան, 23 Յունիս 1946ին, կը պսակուի օրդ. Վարդուհի Միջայէլի Քէհեանի հետ - հեռաւոր ազ-

գական- եւ այս երջանիկ ընտանեկան յարկը կը բախտաւորուի չորս զաւակներով՝ երկու մանչ և երկու աղջիկ:

Որպէս ուսումնասէր հայր, իր անդրանիկ զաւակը՝ Սարգիս, Ազգ. Հայկազեան և Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանը փայլուն նիշերով աւարտելէ ետք, զինք կ'ուղարկէ Դամասկոսի պետական համալսարանը շարունակելու իր ուսումը որպէս բժշկական ճիւղի աշակերտ:

Եօթ տարուայ շրջանը վեց տարիէն աւարտելէ ետք, Սարգիս կ'ունենայ իր անձնական դարմանատունը Հալէպի մէջ:

Երկու տարի աշխատելէ ետք, մասնագիտանալու համար, կը մեկնի Արեւմտեան Գերմանիոյ Զօլինկըն քաղաքը:

Չորս տարի վերջ կ'ամուսնանայ բժշկուհի Ութը Քէհեանի հետ, ծնեալ Շուլտրը եւ կը բախտաւորուի մանչ զաւակով մը՝ Արամ:

Բժիշկ Սարգիս, մասնագիտանալէ վերջ կը փոխադրուի Վուբրըթալ ուր կ'աշխատի որպէս աւագ բժիշկ եւ կը ըստանայ գերմանական հարատակութիւն:

Տղթ. Սարգիս լաւապէս կը խօսի և կը գրէ: Հայերէն, Արաբերէն, Անգլերէն, Գերմաներէն: Ստորագրած է շատ մը բժշկական յօդուածներ Պէյրութի «Բժիշկ» և Հալէպի «Օշական» պարբերաթերթերուն մէջ:

Միջայէլին երկրորդ զաւակը՝ Մարալ, Ազգ. Հայկազեան և Քարէն Եփփէ ձեմարանէն շրջանաւարտ ըլլալէ վերջ, կ'ամուսնանայ Տիար Ժան Տէկիրմէնձեանի հետ եւ կը բախտաւորուի երկու զաւակով՝ Կարօ և Նանոր:

Երրորդ զաւակը՝ Պետիկ, նոյնպէս Ազգ. Հայկազեան և Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն շրջանաւարտ ըլլալէ վերջ, իր համալսարանական ուսումը կը շարունակէ Հալէպի պետական Համալսարանին մէջ, որպէս երկրագործական ճիւղի ուսանող: Կը վկայուի ԷնթէնիէՕՐ ԱԿՐԻՔՈՒ տիտղոսով: Ապա կը մեկնի Քուէյթ, հոն կը ծառայէ Ազգ. վարժարանէն ներս որպէս ուսուցիչ և կ'ամուսնանայ օրդ. Մարալ Թիւթիւնձեանի հետ: Անոնք կը բախտաւորուին մանչ զաւակով մը՝ Ատոմ:

Չորրորդ զաւակը՝ Թագի, Ազգ. Հայկազեան եւ Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանը աւարտելէ վերջ, Հալէպի պետական համալսարանէն ներս կը հետեւի Անգլերէն գրական նութեան ճիւղին: Թագին, նաեւ երաժշտասէր աղջիկ, իր



դասերուն առնթեր կը հետեւի երաժշտութեան դասերու Հալէպի պետական երաժշտանոցէն ներս և կը ստանայ համապատասխան վկայական: Այժմ, ան երաժշտութեան ուսուցչուհի է Ազգ. Քարէն Եփփէ ձեռնարանին մէջ և ունի նաեւ յատուկ դաշնակի աշակերտներ: Ան ամուսնացած է Կարօ Տողրամաճեանին հետ և ունի աղջիկ զաւակ մը՝ Հերմինէ անունով:

Նախ քան քահանայ ձեռնադրուիլը, Միքայէլ, որպէս գործօն անդամ աշխատած է Հ.Մ.Բ.Մ.էն ներս, ստանձնելով պատասխանատու պաշտօններ, ինչպէս վարչական անդամ և ատենադպիր: Եղած է ներկայացուցիչը «Ազգակ» օրաթերթին և շաբաթաթերթին, աշխատելով անոնց թղթթակցութեան և եղած է ներկայացուցիչը «Նայիրի» պարբերաթերթին:

Քահանայ ձեռնադրուելէն ետք, շուտով կ'ընտրուի Պատկառելի Կրօնական Ժողովի անդամ ու կը ստանձնէ ժողովի ատենադպրութիւնը, աւելի ետք ըլլալու համար՝ Ատենապետը: Տասնեակ տարիներ ընարուած է Պատկառելի Գաւառական Ժողովի, Վերաքննիչ Ատենի, Խառն Ժողովի, Կիրակնօրեայ Դպրոցներու Կրօնական Խորհուրդի, «Հայ Մերանոց»ի Խնամակալութեան անդամ, ու վերել յիշուած ժողովներուն մէջ վարած է գրեթէ միշտ Ատենադպիրի եւ Ատենապետի պաշտօններ, ի ձեռին ունենալով յաճախ ժողովի ատենադպրութիւններու տետրակները:

Երջանկայիշատակ Չարեհ և Խորէն Վեհափառներու ընտրութեանց և Ս. Օծման առիթներով, որպէս պատգաւ մաւոր ընտրուած է և ներկայ եղած՝ ընտրութեանց ու արարողութիւններուն: Մասնակցած է նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ընտրութեան և Ս. Օծման, դարձեալ որպէս ընտրեալ պատգամաւոր: Միւռոնօրհնէքներու ալ ներկայ եղած է յԱնթիլիաս:

Արժ. Տէր Հայրը, Գերշ. Տ. Ղեւոնդ Ս. Արք. Չէպէեանի, Գերշ. Տ. Տաթեւ Ս. Արք. Սարգիսեանի և Գերշ. Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեանի Առաջնորդութեան շրջաններուն, եղած է միշտ անոնց կողքին, անաչառ վարելով Առաջնորդական Փոխանորդի պաշտօնը:

Ղեւոնդ Սրբազան Հօր հրատարումին առիթով (1967), տարի մըն ալ վարած է Առաջնորդական Տեղապահի պաշտօնը, մինչև Տաթեւ Սրբազան Հօր ժամանումը ի Հալէպ: Ան, իր տեղապահութեան շրջանին, քաջարար դիմագրաւած է բոլոր դժուարութիւնները Ազգային եւ Եկեղեցական

մարդերէն ներս, և միշտ թիկունք կանգնած՝ Ազգային Հասերուն և Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անասան պաշտպանման:

Երջանկայիշատակ Խորէն Վեհափառ Հօրմէն, առ ի գընահատանք, ստացած է Լանջարաչ և Սեւ ծաղկեայ Փիլոն կրելու իրաւունք, ինչպէս նաեւ Աւագութեան տիտղոս:

Քահանայ ըլլալէ ետք ալ շարունակած է իր թղթակցութիւնները «Ազգակ» օրաթերթին և Մեծի Տանն Կիլիկիոյ պաշտօնաթերթ՝ «Հասկ»ին, նաեւ յօդուածներ գրած է Բերիոյ Թեմի պաշտօնաթերթ «Օշական» եւ «Հայ Մերանոց» պարբերաթերթերուն մէջ: Երջանկայիշատակ Չարեհ Կաթողիկոսին կողմէ նշանակուած էր «Հասկ»ի եւ Անթիլիասի Կաթողիկոսութեան տպարանի բոլոր տպագրական գործերուն ներկայացուցիչ Բերիոյ Թեմէն ներս:

Արժ. Տ. Աստմ Ա. Քհնյ. Քէհեանեան եղած է Ուրֆայի Հայ Երիտասարդաց Միութեան Վարչութեան տարիներու Ատենադպիրը: Ան, Ուրֆայի Հայրենակցական Միութեան Նախագահն է: Յաճախ օգնած է Ուրֆայի եւ Կարմուճի Տիկնանց Միութիւններուն, նիւթապէս ու բարոյապէս օգտակար հանդիսանալով անոնց:

Որպէս բեմասաց, Միութիւններու պաշտօնական ձեռնարկներուն առիթներով բեմ բարձրացած է, և իր կուռ խօսքերով քաջալերած Միութիւններու վարչութիւնները և մերազն ժողովուրդը, որ միշտ օգտակար հանդիսանան մեր միութենական գործունէութիւններուն, օժանդակելով անոնց նիւթապէս եւ բարոյապէս:

Պատրաստած է «Կրօնական Գիտելիքներ»ու գրքոյկ մը, Կիրակնօրեայ Դպրոցներու բանձրագոյն կարգերուն համար պորձածելի:

Իր վերջին երկու պատրաստած գիրքերն են «Դիւցադնական Ուրֆան եւ իր Հայրողիները» խորագիրով պատմական վաւերագիրք մը: Երկրորդը՝ «Կարմուճ» որ Չօնած է համանուն գիւղաքաղաքացիներուն:

11 Հոկտեմբեր 1986ին, Ահարոնեան սրահին մէջ պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին, Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեանի ձեռամբ կը ստանայ «Գնահատագիր» մը, իր, երեսուն եւ աւելի երկար տարիներու, քահանայական ծառայութեան համար:

9 Մարտ 1989ի Ծաղկազարդի օրը, Ուրֆայի Տիկնանց



Միութեան կազմակերպած տարեկան ճաշկերոյթին, Արամ Մանուկեան Համալիրի Սպիտակ սրահին մէջ, Ուրֆայի Տիկնանց Միութիւնը գնահատելով Արթ. Տ. Ատոմ Աւագ Քհնյ. Հօր տարած եկեղեցական և հայրենակցական անխոնջ աշխատանքները, իրեն կը նուիրէն Արծաթեայ Սեղանի Խաչ մը, իր քահանայագործութեան 35 ամեակին առիթով, Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ:

Այս առիթով Սրբազան Հայրը կը գնահատէ Քահանայ Հօր տարած անսակարկ աշխատունակ գործունէութիւնը, հանդէպ իր ժողովուրդին, իր հայրենակցական Միութեան, իր եկեղեցւոյ և Բերիոյ Թեմի հնադարեան Աթոռին: Որպէս անձնազիր և անշահախնդիր հովիւ վեր կ'առնէ անոր, մանաւանդ որպէս ժողովականի և ղեկավարի յատուկ առաքինութիւններն ու յատկութիւնները :Տ. Ատոմ հայրը 15 տարիէ ի վեր Աւագերէցն է Ս. Քոս. Մանկանց Մայր եկեղեցւոյ:


Արթ. Տէր Հայրը ընթերցասէր քահանայ մըն է, իր անձնական գրադարանը հարուստ է ճոխ գիրքերով, թերթերով և պարբերականներով և իր բացառիկ տեղը ունի Հալէպի գրադարաններու շարքին մէջ: Ան ունի հնատիպ ու արժէքաւոր գիրքեր ու հաւաքածոներ:

Արթ. Տ. Ատոմ Ա. Քհնյ. Քէհեան կ'ապրի իր 69րդ դարունը, գարուն ըսի, որովհետեւ տակաւին ան, հակառակ իր յառաջացեալ տարիքին, ունի երիտասարդական եռանդ, աշխոյժ ու կորով: Կ'ազօթենք առ Աստուած, որ առաւել ևս աշխուժացնէ զինք, որ ընդ երկար կարենայ ծառայել մեր եկեղեցւոյ և հայ ազգի անդաստանէն ներս:

Վարձքդ կատար Սիրելի Տէր Ատոմ:

ԳԱՆՈՒՄՏ ՔՀՆՅ. ԷՔՄԷՔՃԵԱՆ

Հալէպ, 1 Նոյեմբեր 1990



*[Faint, illegible text visible through the paper from the reverse side.]*

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ:

Արտասահմանի մէջ ինչպէս ըսինք զիր ու ցան կարմուճ-ցիները, մանաւանդ այս օրերուն կարելի է հաւաքել եւ արձանագրել այս գրքոյկին մէջ, մենք պիտի գոհանանք միայն Սուրբոյ մէջ գտնուող Համալսարանականներու ցանկը տեղաւորել մեր կարելիութեան սահմանին մէջ, վստահ ըլլալով, որ անպայման մտապոմներ և թերացումներ պիտի ըլլան:



ՏԻԱՐ ՆԵՐՍԷՍ ՄՂԶ. ՆԵՐՍԷՍԵԱՆ.

Որդի Գէորգի և Խաթունի, 1910ի ծնունդ ի Կարմուճ: 1915ին նահատակուած Կարմուճի զիւղապետին՝ Գէորգ Մղձ. Ներսէսեանի զաւակն է Ներսէս:

Հալէպի զինուորական արհեստանոցին մէջ իբրև մեքենագիրութեան պատասխանատու, (ՇէՔ) վստահելի և վարպետ արհեստաւոր, կրցած էր համակրանք ստեղծել իր անձին շուրջ:

*[Faint, illegible text visible through the paper from the reverse side.]*



1950ին Սուրբազան կառավարութեան կողմէ կղերական կը զբաղուի, այնուհետ նաւային մեքանիզատիւնի մէջ մասնագիտանալու և ստանձնելու կղերական կառավարութեան կողմէ Սուրբոյ նուիրուած նաւերը:

Տասնեակ տարիներ աշխատելէ վերջ, ներկայիս հանդրատեան կոչուած է եւ հանգստեան թոշակ կը ստանայ Սուրբազան Պետութենէն:

**ԱՐԺ. ՏԷՐ ՆԱՐԵԿ ՔԶՆՅ. ԶԵՐԵՆՅԵԱՆ.**

Որդի Յովհաննէսի եւ Վերթինի, 1952 ի ծնունդ ի Հալէպ, աւագանի անունով Գէորգ:

Նախակրթութիւնը եւ երկրորդական ուսումը ըստացած է Կիլիկեան Վարժանանին մէջ: 1986 ին ընդունուած է Անթիլիասի քահանայից դասարանը, 30 Հոկտ. 1988 ին, կ'ամուսնանայ, ունի մանչ գաւակ մը:

1988 Դեկտ. 4 ին քահանայ կը ձեռնադրուի, Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս. ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԷՆ, Ս. Գէորգ Եկեղեցւոյ ծխականներուն համար:



**ՄԵԹՐ ՇՈՒԲՐԻ ԳԱԼԱՅՃԵԱՆ.**



Որդի Կիրակոսի եւ Մէծիտէի, 1934 ի ծնունդ ի Թէլ Ապիատ: Նախակրթութիւնը ստացած է Ռազդաշի մէջ, երկրորդականը Հալէպի Թէր Սէնթէն: Երեք տարի Դամասկոսի Միացեալ Վարժարանին Տնօրէն եղած է:

Երեք տարի Հալէպի Ազգ. Հայկազեան Վարժարանին Արարերէն լեզուի ուսուցիչ եղած է:

1966 ին փոխադրուած է Պէյրութ, Սահմիրեան եւ Նշան Փալանճեան ձեմարան

ներուն մէջ Արարերէն լեզու դասաւանդած է:

Ուսուցչութեան շրջանին ուսումը շարունակած է Գամասկոսի Իրաւաբանութեան ճիւղին, 1970 ին աւարտած է եւ ստացած Փաստաբանի վկայական:

Ուսումը շարունակած է եւ 1975 ին ստացած՝ Իրաւագիտութեան Տօքթօրայի վկայականը: Հաստատուած է Հալէպ, ունի իր անձնական գրասենեակը:

**ՏՈՔԹ. ՅԱԿՈՒ ԶԱՆԵՅԵԱՆ**



Որդի Սարգիսի եւ Մաքրուհիի, 1942 ի ծնունդ ի Թ. Ապիատ նախակրթութիւնը կը ստանայ Ազգ. Զաւարեան վարժարանին մէջ, երկրորդական ուսումը՝ ըստացած է Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Համալսարանական ուսումը կը ստանայ, Արեւմտեան Գերմանիոյ Հայտելաբերկի բժշկական ճիւղէն:

1970 ին աւարտելէ ետք բժշկական ճիւղը, կը շարունակէ ուսումը մինչեւ 1976, մասնագիտանալով, ներքին հիւանդութեանց եւ սրտի հիւանդութիւններուն:

1976 ին կը վերադառնայ Հալէպ, կ'ունենայ իր անձնական գործնաստուներ:

**ՏՈՔԹ. ՀԱՄԱԶԱՍՊ ՇԱՀԻՆԵԱՆ**

Որդի Յովհաննէսի եւ Ռօզինի, 1956 ի ծնունդ ի Գամիշլի:

Նախակրթութիւնը ստացած է Գամիշլիի Հայ Կաթողիկէ վարժարանին մէջ, երկրորդականը աեղւոյն Պետական վարժարանէն:

1975 ին կ'ընդունուի Գամասկոսի Պետական Համալսարանի Առամնարութեան բաժինը, 1980 ին Շըրջանաւարտ ըլլալէ ետք, երկու տարի ալ հետեւած է ա-





տամները ուղղելու մասնագիտութեան:

Վերադարձած է Հալէպ, ունի իր անձնական դարձար նատուներ միեւնոյն ժամանակ ուսուցիչ է Հալէպի Պետական Համալսարանի Ատամնարուժական բաժնին մէջ:

**ՏՈՔԹ. ԱՐԱ ՏԵՐՏԵՐԵԱՆ**



Որդի Սարգիսի եւ Անահիտի, ի, 1958 թ ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ստացած է Ազգ. Մահակեան վանժարանէն, երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1977 ին ընդունուած է Գամակոսի Պետական Համալրսարանը, Ատամնարուժական ճիւղը, 1984 ին Շրջանաւարտ, ունի իր դարձար նատուներ Հալէպի մէջ:

**ՏՈՔԹ. ԳԵՈՐԳ ՄԱՍՆԱՆԵԱՆ**

Որդի Սահակի եւ Աղաւնիի, 950 թ ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը կը ստանայ Ազգ. Մեսրոպեան Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը շարունակած է ձօրճ Սէլէմ Վարժարանին մէջ, շրջանաւարտ եղած է 1969 ին: Երկու տարի ուսուցչութիւն ընելէ յետոյ ընդունուած է Երեւանի Համալսարանէն, 1978 ին Շրջանաւարտ ստացած է բժշկութեան վկայականը, երկու տարի եւս շարունակած է եւ մասնագիտացած մանկարուժութեան դարձարումի բաժնէն, ստանալով համապատասխան վկայական:



**ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Որդի Աւետիսի եւ Աղաւնիի, 1964 թ ծնունդ ի Ռազդա:



Նախակրթութիւնը ու Երկրորդական ուսումը ըստացած է Լազար Նաճարեան - Գալուստ Կիրակչեան Վարժարանին մէջ:

1982 ին կ'ընդունուի Ռումանիոյ ՔԼՈՒՃ քաղաքի Համալսարանը, բժշկական ճիւղը, 1989 ին շրջանաւարտ, ուսումը կը շարունակէ Ռումանիոյ Պոխարեստ քաղաքի Համալսարանը, կանաչի

հիւանդութեանց մասնագիտութեան բաժնին մէջ:

**ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՅՃԵԱՆ**

Որդի Սարգիսի եւ Ռօզայի, 1954 թ ծնունդ ի Հալէպ:



Նախակրթութիւնը ըստացած է Թէլ Ապիսատի Ազգ. Խորէնեան Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը Ռազդայի Պետական Վարժարանէն:

Ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, բժշկական ճիւղէն, վկայուած է 1979 ին, ունի իր անձնական դարձար նատուներ:



ՏՈՔԹ. ՄԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՆ.

Դուստր Աւետիսի և Աղանիի, 1957 թ ծնունդ Ռազզա:

Նախակրթութիւնն ու Երկրորդական ուսումը ըստացած է Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանին մէջ:

1978ին ընդունուած է Երևանի Համալսարանը, 1985ին վկայուած է բժշկական ճիւղէն, վերադարձած է Հալէպ և ունի իր սեփական դարձանատուներ:



ՏՈՔԹ. ԼԵՆԱ ԳԱԶԱՆՃԵԱՆ.

Դուստր Աւետիսի և Աղանիի, 1961 թ ծնունդ ի Ռազզա:

Նախակրթութիւնն ու Երկրորդական ուսումը ըստացած է Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանին մէջ:

1980 ին ընդունուած է Երևանի Համալսարանը, 1987 ին վկայուած է բժշկական ճիւղէն, վերադարձած է Հալէպ և ունի իր սեփական դարձանատուներ:



ՄԱՂԹԱՆՔ — ՕՐ ՀՆՈՒԹԻՒՆ

Աստուած քեզիկ ձեռած, սոսայ չձգէ.

Աստուած հետիտ, բարին դէմիտ.

Այդպէնս գնամ իչ էնողին տունս ըննս.

էրեսիտ սպիտակ ըննայ.

էրեսիտ միտ ըննայ.

Ինչըս ճամբեցիք, էտնեց գանէք.

Խող բոնես՝ օսկի գառնայ.

Հայր Արրահամու սեղանս ըննայ

Մարով պապով մենցնէք.

Մէկ տուողին Աստուած հըզար տայ.

Ոտքս գուտոնմ լի ըննայ.

Պէրխուտար ըննաս.

Պապուտ օղորմի.

Սատանին էկէնճա խուլ ըննայ.

Տէրս աուր գալած փորձանքներէն հաուու պիչէ



ԴԵՂԱԳՈՐԾ ԿԱՅԾԱԿ ԴԱԻԻԹԵԱՆ



Որդի Դաւիթի եւ Եղիսարէթի 1951ի ծնունդ ի Բասիւլ Այն: Նախակրթութիւնը ստացած է Ազգ. Հայկազեան վարժարանէն, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1971ին ընդունուած է Դամասկոսի Պետական Համալրարանը, 1976ին Շրջանաւարտ եղած է դեղագործական ճիւղէն վկայական ստանալով:

Մի քանի տարի ձըսըր Ծուպուրի մէջ գեղարան ու-

նենտլէ յետոյ առայժմ Լաթաքիա փոխադրուած է եւ ունի իր անձնական գեղարանը եւ գեղ բաժնելու մասը:



ՏՈՔԹ. ԳԷՈՐԳ ՊԱՊՕՂԼԵԱՆ.



Որդի Նազարեթի եւ Ալիսի, 1966ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Հայկազեան վարժարանին մէջ, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1985ին ընդունուած է Հալէպի Պետական Համալրարանը Ատամնարուժական բաժնին մէջ: 1990ին, չըրջանաւարտ եղած է եւ վերկայուած իրը Ատամնարոյժ:

ՏՈՔԹ. ԴԱԻԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ



Որդի Աբրահամի եւ Ազնիւի, 1959 ի ծնունդ ի Արար Բունար: Նախակրթութիւնը Ազգ. Չաւարեան վարժարանէն, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Ընդունուած է Հայաստանի Պետական Համալրարանը, Իժիլութեան ճիւղը:

1982 ին Շրջանաւարտ, կը շարունակէ Մասնագիտութիւնը ԹԱՇՐԻՀ ՄԱՐԱՏԻ ճիւղին մէջ:

ՏՈՔԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ.

Որդի Անդրանիկի եւ Զուարթի, 1965 ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Սահակեան Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը Ազգ. Քարէն ձեմարանէն:

1985 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալրարանը Ատամնարուժական բաժնին մէջ: 1989 ին Շրջանաւարտ՝ կը ստանայ համապատասխան վկայական ու կը մեկնի Փարիզ, Սորպոնի Համալրարանը, ստանալու համար իր ճիւղին մասնագիտութեան վկայականը:

ՏՈՔԹ. ԱՐԱՋ ԱՏՈՒՐԵԱՆ.



Որդի Տիգրանի եւ Մարիի, 1967ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնն ու Երկրորդական ուսումը ըստացած է Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանին մէջ:

1984ին ընդունուած է Երեւանի Պետական Համալրարանը, Ատամնարուժական բաժնին մէջ, ուսման վերջին տարին է:



**ՔԻՄԻԱԳԻՏ ԳԻՈՐԳ ՄՂԶ. ՆԵՐՍԷՍԵԱՆ**



Որդի Ներսէսի և Արշալույսի, 1958ի ծնունդ է Հալէպ: Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Հայկազեան վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն: 1976ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, Քիմիագիտութեան ճիւղին մէջ որպէս ուսանող: Շրջանաւարտ եղած է 1981ին:

1981ին մեկնած է Սէուտական Արաբիա, հոն ընկերութիւններու մէջ աշխատելով մէկտեղ հետեւած է Լոս Անձելոսի Ն. Թ. Ս. Ի էյր Քօնտրոլինի դասընթացքին, ստացած է համապատասխան վկայական, որպէս էյր Քօնտրոլի մեքանիքի եւ ելեքտրականութեան մասնագէտ:

Ներկայիս Սէուտական Արաբիա, Պէն Լատին ընկերութեան մէջ կ'աշխատի որպէս պատասխանատու Մասնագէտ:

**ՔԻՄԻԱԳԻՏ ՔՆԱՐԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ**

Գուտար Յովհաննէսի և Արշալույսի, 1957ի ծնունդ է Գամիշլի:

Նախակրթութիւնը ըստացած է Գամիշլիի Ազգային վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը ստացած է Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1975ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանէն, Քիմիագիտութեան ճիւղը աւարտած՝ 1980ին, մինչեւ այսօր իրր ուսուցչուհի կը պաշտօնավարէ Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանին մէջ:



**ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ՅՈՎՍԷՓ ԳԱԶԱՆՃԵԱՆ.**



Որդի Աւետիսի և Աղաւնիի, 1954 ի ծնունդ է Ռազդա:

Նախակրթութիւնը ըստացած է Հալէպի Կրթատիրաց Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը՝ Հալէպի Ամերիկեան Գոլէժէն ներս:

1976 ին ընդունուած է Երեւանի Համալսարանը եւ 1982 ին Շրջանաւարտ ըլլալով ստացած է Շինարարականի վկայականը, վերադարձած է Հալէպ եւ ունի սեփական գրասենեակ:



**ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ԳԻՈՐԳ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ**

Որդի Արուշի և Մարիի, 1956 ի ծնունդ է Հասաքէ:


Նախակրթութիւնը ըստացած է Հասաքէի Ազգ. Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը տեղւոյն Պետական Վարժարանէն:

1972 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, ուսանած է հոգաժըշկութիւն — էնժէնէՅՕՐ Ակրիբօլ, Շրջանաւարտ եղած է 1978 ին եւ դարձած ուսուցիչ Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանին մէջ:





ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ԳԷՈՐԳ ՃԱՆՆՑԵԱՆ.



Որդի Սարգիսի եւ Մաքրուհիի, 1948 ի ծնունդ ի Թ. Ապիաս:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Զուարեան Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը՝ Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1971 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանի Ելեքթրական բաժնին մէջ: 1976 ին Շրջանաւարտ եղած է եւ կը գործէ Հալէպի Բլաթիքի Ընկերութեան մը մէջ իբր ձարտարագէտ էլէկթրիկ:



ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ԼՈՒԻԶԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ.

Գուսար Անդրանիկի եւ Զուարթի, 1962 ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Սահակեան Վարժարանին մէջ, Երկրորդականը Հալէպի Ամերիկեան Գոլէժէն:

1980 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, Մեքանիք բաժնին մէջ: 1985 ին կը ստանայ համապատասխան վկայական ու կը սկսի աշխատանքի Հալէպի քաղաքապետարանին մէջ, իբր էնժէնէօր Մեքանիք:



ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՊՈՒԼՈՊՈՒԹԵԱՆ.



Որդի Տիգրանի եւ Սառայի. 1958 ի ծնունդ ի Թէլ Ապիաս:

Նախակրթութիւնը եւ Երկրորդականը Ռազգայի Պետական Վարժարանէն:

Ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը եւ վկայուած 1983 ին, էնժէնէօր Ակրիքօլ Տիպոսով:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ԼԵՒՈՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Որդի Աւետիսի եւ Արմինէի, 1950 ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը եւ Երկրորդական ուսումը ստացած է Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանէն:

1971 ին ընդունուած է Երեւանի Համալսարանը, 1977 ին աւարտած է եւ ստացած ճանապարհաշինութեան համապատասխան վկայական:

ՋԵՓԻԻՒ ԳԱՍՊԱՐԵԱՆ



Գուսար Յովհաննէսի եւ Արշալոյսի, 1960 ի ծնունդ ի Գամիշլի:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Սահակեան Վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Ուսումը շարունակած է, հետեւած է Փարիզի Սորպոնի Համալսարանի Հայագիտական բաժնին, շրջանաւարտ ըլլալով 1989 ին:



Իրաւարան ՍՕՆԱ ԳԱՍՊԱՐԵԱՆ.



Դուստր Յովհաննէսի եւ Արշալոյսի, 1958 ի ծնունդ ի Գամիշլի:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Մահակեան վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1976 ին ընդունուած է Պէյրութի Արարական Համալսարանէն, 1981 ին վըկայուած է Իրաւարանութեան Տիտղոսով:

Վերադարձած է Հալէպ, կը պաշտօնավարէ Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանին մէջ, Պատասխանատու եւ վարիչ է ձեմարանի Գրադարանին:

Պատասխանատու եւ վարիչ է ձեմարանի Գրադարանին:



ՍԱԼԻԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Դուստր Պետրոսի եւ 1960 ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը ստացած է Ազգ. Զուարեան վարժարանէն, Երկրորդականը Կիլիկեան ձեմարանէն:

Ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը 1980 ին, հետեւած է Անգլերէն Գրականութեան եւ վըկայուած է 1985 ին, կը պաշտօնավարէ Կիլիկեան ձեմարանէն ներս, դասաւանդելով Անգլերէն լեզու:



ՏՆՏԵՍԱԳԷՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԺԱՆԵՑԵԱՆ

Որդի Սարգիսի եւ Մաքրուհիի. 1955 ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը ըստացած Ազգ. Զուարեան վարժարանին մէջ, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1974 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանի Տնտեսական Գիտութեանց բաժնին մէջ իբր ուսանող:

1979 ին վկայուած է Համալսարանէն եւ մեկնած Մէլուտական Արարիւ, հոն կ'աշխատի ընկերութիւններու մէջ իբր Տնտեսական Գիտութեանց Սորճողատու:



ՃԱՐՏԱՐԱԳԷՏ ԺՈՐՃ ԳԱԼԱՅՃԵԱՆ



Որդի Գարեգինի եւ Մարիի, 1963 ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը ստացած է Ազգ. Հայկազեան վարժարանին մէջ, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1982 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, Երկրաչափական ճիւղը, Շրջանաւարտ եղած է 1987 ին:



ԱՐՓԻ ԱՏՈՒՐԵԱՆ



Դուստր Տիգրանի եւ Մարիի, 1958ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը եւ Երկրորդական ուսումը ստացած է Լադար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարանին մէջ:

Իբր ուսուցչուհի պաշտօնավարած է Հայ Քոյրերու վարժարանէն ներս, միւսնոյն ատեն ուսումը շարունակած է Հալէպի Պետական Համալսարանին մէջ, եւ ըստացած է Անգլերէն Գրականութեան վկայական՝ 1981ին:

1985էն ի վեր կը վարէ Ազգ. Մեքորպեան վարժարանի Տնօրէնութիւնը, այս անգամ ուսանող է Երեւանի Համալսարանին, մասնագիտութիւնն է Բախտատական Գրականութիւն ՀԱՅԵՐԷՆ — ԱՆՔԼԵՐԷՆ լեզուին:

Մխիթարեան Միարանութեան հրաւերով, երեք տարի վենետիկի Մուրատ Ռափայէլեան վարժարանի ամսոնային Հայերէնի դասընթացներուն ուսուցչուհի եղած է:

ՃԱՐՏԱՐԱԳԷՏ ՍԱԼԻԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ.

Դուստր Յովհաննէսի եւ Արշալոյսի, 1962 ի ծնունդ ի Գամիշլի:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Սահակեան վարժարանին մէջ, Երկրորդական ուսումը Ազգ. Քարէն Եփեփէ ձեմարանէն:

1980 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, 1985 ին վկայուած է Ելեքթրոնական ճիւղէն ԷԼԷՔԹՐՕՆ, Սալբի ուսումը կը շարունակէ Մոսկուայի մէջ, մասնագիտանալու համար իր ճիւղին մէջ:



ՏԻՐՍՈՒ ՎԱՀԷՄԴՉ. ՆԵՐՍԷՍԵԱՆ.



Որդի Ներսէսի եւ Արշալոյսի 1941 ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը ըստացած Ազգ. Հայկազեան վարժարանէն: Վահէն փոքր տարիքէն, ծնողքին կողմէ ստաջնորդուած է Ս. Քոստանկանց Մայր Եկեղեցին, ստաջին օրէն ստանց բացակայութեան շապիկ կը հագնի եւ ներկայ է բոլոր արարողութեանց: Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. ՍՈՒՐԷՆ Ս. ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԷՆ ստացած է զբարբութեան աստիճանները եւ ՈՒՐԱՐ կրեչու իրաւունք:

Տասնեակ տարիներէ ի վեր Դպրաց Դասու վարչութեան մաս կը կը կազմէ, 40 տարիէ անսակարկ կը ծառայէ Եկեղեցւոյ եւ Դպրաց Դասուն:



ՃՕՐՃ ՊԱՊԵԱՆ.

Որդի նուրիի եւ Մարիի, 1956 ի ծնունդ ի Հալէպ:

Ծնողքին Պաշտօնեայ ըլլալուն պատճառով թէ նախակրթութիւնը եւ թէ Երկրորդական ուսումը ստացած է զմնազան քաղաքներու եւ դպրոցներու մէջ:

1975 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, Անգլերէն լեզուի բաժնին մէջ, վկայական ըստանալէ յետոյ 1980 ին, կը դառնայ չրջանուարա եւ ուսուցիչ Անգլերէն լեզուի:

Ուսանողութեան չրջանին երկու տարի կը պաշտօնավարէ Ազգ. Զուարեան վարժարանին մէջ, վկայական ըստանալէ յետոյ կը մեկնի Քուէյթ Ազգ. վարժարանին մէջ կը սկսի դասաւանդել մինչեւ այսօր:





ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐԵԱՆ



Որդի Սարգիսի եւ Մարիի 1967 ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Հայկազեան Վարժարանէն, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Ընդունուած անասնաբուժական ճիւղը, բայց թերաւարտ հետացած է Համալսարանէն: Կը սիրէ արտասանել, դարձած է ասմունքող, բոլոր ձեռնարկներուն անպայման իր մասնակցութիւնը կը բերէ:

Նարեկ Ղազարեանի ասմունքի առաջին երեկոն էր, 9 Ապրիլ 1986 թուականը, ուր ներկայացուց Յ. Շիրազի «Փոթորիկ Հայոց Տանգէականը» Ան ելոյթներ ունեցած է Լաթաքիա, Քէսասպ, Գամիշլի, Այնճար եւ արժանացած է բոլորին գնահատանքին և երկարատեւ ծափահարութիւններուն:



ԱՐՏԱ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Դուստր Շուքրիի եւ Ժանէթի 1961 ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ստացած է Պէյրութ Նշան Փալանճեան ձեմարան երկնորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Պէյրութի մէջ երկու տարի կը հետեւի Հայ Լեզուին-գրականութիւն -1982ին կը փոխադրուի Փարիզ, կը հետեւի Համալսարնային Քաղաքականութեան, 1987 ին շրջանաւարտ, կը շարունակէ ստանալու համար Տոքթորայի բաժինը:



ԱԻՕ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Որդի Շուքրիի եւ Ժանէթի 1964 ի ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը Պէյրութի Նշան Փալանճեան ձեմարանը, Երկրորդականը Հալէպի Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1986ին կը սկսի Իրաւագիտութեան ճիւղին հետեւիլ 1990ին շրջանաւարտ կ'ըլլայ:



ՍՕՆԱ ԳԱԼԱՅՃԵԱՆ



Դուստր Գարեգինի եւ Մարիի, 1965 ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Հայկազեան Վարժարանին մէջ, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Ընդունուած է Հալէպի Պետական Համալսարանը, Անգլերէն Գրականութիւն, Շրջանաւարտ եղած է 1989 ին:



ՃԱՐՏԱՐԱԳԻՏ ՍԻՄՈՆ ՏԵՐՏԷՐԵԱՆ

Որդի Սարգիսի և Անահիտի, 1943 ի ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ստացած է Ազգ. Մահակեան վարժարանէն Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Մեկնած է Իտալիա, և ուսումը շարունակած Փառ-

մա քաղաքի Համալսարանին մէջ, Հողագիտութեան ճիւղը ժէօլոթի: 1965ին:

1972 ին Շրջանաւարտ, եկած է Սուրիա և սկսած է պաշտօնավարել Եփրատի մարտակի հաստատութեան մէջ, կը շարունակէ մինչեւ այսօր:



ՃԱՐՏԱՐԱՊԷՏ ՎԱՐԳԵՆԻ ԴԱԻԻԹԵԱՆ



Գուսար Գալիթի եւ Եղիսարէթի 1967 թ ծնունդ ի Հալէպ: Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Զուարեան վարժարանէն, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

1985ին ընդունուած է Հալէպի Պետական Համալրարանը, վերջին տարին է պիտի ստանայ ճարտարապետութեան վկայականը:

ՆՈՐԱ ԱՏՈՒՐԵԱՆ.

Գուսար Տիգրանի եւ Մարիի, 1959 թ ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը եւ Երկրորդական ուսումը ըստացած է Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնեան վարժարանին մէջ:

1978 ին ընդունուած է Հալէպի Պետական Համալրարանը, ուսանած է Մաթեմատիքի բաժնին մէջ եւ Երջանաւարտ եղած է ու կը պաշտօնավարէ Հայ Քոյրերու վարժարանին մէջ:

ԹԱԼԻՆ ԵՐԱՆՈՍԵԱՆ.



Գուսար Յակոբի եւ Քրիսթինի, 1965 թ ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը Ազգ. Հայկազեան վարժարանէն, Երկրորդական ուսումը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Ընդունուած է Հալէպի Պետական վարժարանը, երկու տարի հետեւած է եւ վըկայուած Արեան Քննութեան ճիւղէն եւ կ'աշխատի տարրալուծարանի մէջ:



ՍԻԼՎԱ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Գուսար Գարեգինի եւ Մարիի, 1970 թ ծնունդ ի Հալէպ:

Նախակրթութիւնը ըստացած է Ազգ. Հայկազեան վարժարանին մէջ, Երկրորդականը Ազգ. Քարէն Եփփէ ձեմարանէն:

Ընդունուած է Հալէպի Պետական Համալրարանը, երկու տարի ուսանած է հոգաանատեական բաժնին մէջ իբր օգնական: Սկսած է դաստանդել նոյն ճիւղին մէջ Համալրարանէն ներս:



Անի Արրահամի Քեչեղեան, Սարգիս Սահակի Գրաթեան, սիլվի ճարտարապէա, Տոքթ. Ռուբէն Տէրաշեան որդի Յովհաննէսի եւ Սիւզանի, Սարգիս Առաքելեան որդի Նուրիի, Սիլվա Մկրտիչ Փախանեանի ե Մարիի, Սալբի Գազանձեան եւ Մարալ Գազանձեան:



ՍԻՐԱՅԻՆ ՔԱՌԵԱԿՆԵՐ

Հայ ի՞նչ էնեմ, ի՞նչ էնեմ,  
Էլլամ տէներա ինչ էնեմ  
Էքսուս տարուայ աղջին եմ՝  
Սարգիսա չառնամ ի՞նչ էնեմ:

Հայ ի՞նչ էնեմ, ի՞նչ էնեմ  
Էջնամ բակա ի՞նչ էնեմ  
Ես պըպըլուկ հարս մի եմ  
Մորվո՛ք էրիկ ի՞նչ էնեմ:

Թլփուտուրա կէնէչ ա  
Գառղան գա, գա կը կէնչէեա  
Ամէն տեղա հաւներ եմ,  
Քիչ մը աչուին կէնէնչ ա:

Աղկէկ լաթեր հագնէի,  
Խորանին դիմացա կայնէի  
Եսիկ պըսակոդ Տէրտըբուն  
Երկու ձեռքա պագնէի:

Նստեր ա հորուն տակա՝  
Կը փելլա մատնուն ակա,  
Աչուվ, ընփուվ կը կէնչէ՝  
Աթլաս տեղերուն տակա:

Խմեր եմ ալ եղեր եմ,  
Խնձորի տալ էղեր եմ,  
Հերու պլպուլի կըլմանի՝  
Աս տարի լալ էղերեմ:

Հերու չուների գօտի,  
Աս տարի զօգ զօգ գօտի,  
Գօտիս է պուրմա, պուրմա,  
Տուշմընտուս էչուին կուրնա:

Գագա եմ բոնին մէջա,  
Կը տապկուիմ եղիս մէջա,  
Աստուած մուրագիս, թող տայ  
Գալած ամուսայ մէջա:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՐ

Օրօր ըսեմ քննաս,  
Ծըլլիս ծաղկիս գօրանաս  
Ամէն տէրտի դիմանաս  
Պապուդ օճախին տիրանաս:

Թուքի ծառին կապեմ օրան  
Թուքը ընկնի եավրուս բերան  
Պիւլպիւ կանչէ ձէնիդ հէյրան  
Մզդէ գուրպընիս աչուին նէյրան:

Օրօր տղաս քունդ անուշ:  
Թէգ արթնցիր չը մընաս ուշ,  
Բերանիդ մեղր քնթիկդ նուշ,  
Չար աչուընին մտնան սուր փուշ:

Սրտիս նիկերէն փրձընեմ,  
Քաղցրիկ կաթիս կերցնեմ,  
Օրօր ըսեմ քննացնեմ,  
Խէրով բարով մենծցընեմ:

Ողջ քննուտ, ողջ արեւուտ,  
Կոնակ շարեմ թեւերուտ,  
Շաֆար ցանեմ թըշտերուտ  
Ծարիր դնեմ աչքերուտ:

Գուրպան ըննամ ես քրզի,  
Շիւկէն կը ծախուի գուզի,  
Հատ մի առնամ ես քրզի:  
Էրթաս խաղաս դուն քրզի:

Հայ էրեք, հայ հայ էրեք,  
Սեւ հաւ մի գուրպան էրեք,  
Միսն ուտեմ  
օսկըրտին տէներա քարեմք  
Տէնտըրին քէշէն փլա  
Իմ տղաս մէջէն թուա: